



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lkn

309

199



ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՏՐՈՆ

ՏԵՏՐԱԿ Դ.

ՍԷՐ կամ ՄԱՀ.

ողբերգութիւն



Գ. Բարխուդյան րեանցի



Թ Վ Ֆ Լ Ի Զ

ԿՆՆԻ ՎԳ ԿՅՆՏԻԱԶԵՍՆՅԻ ԵՒ ՈՂԿ

1869

43720-4.1

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ՏԵՏՐԱԿ Դ.

ՍԷՐ կամ ՄԱՀ.

ողբերգութիւն


1605.

ՀԻՆ Գ. ԳՈՐԾՈՂ ՌԻԹՄ. ՄԻՔ

Հեղինակութիւն

ԳՐԱԳԱՐԱՆ

Գ. Բարխուդարեանցի



ԹԻՓԻՆԱ

ՀԱՄԲ. ԷՆՑԻԱՃԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ.

ՏՊԱՐԱՆՈՒՄԸ:

1869

302

Дозволено цензурою. 15 Апрелья 1869 г. Тифлисъ:

1902.



28054-62

28. 312

309-60

9-

110

400

U. U. Z.

Ս Է Ր կամ Մ Ա Հ

« Ղ Ր Ե Ր Գ Ա Լ Թ Ի Ը Ն »

—

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Մ Ա Հ Տ Ե Ս Ի Խ Ա Չ Ա Տ Ո Ի Ր, Աստապատ գիւղի տանու-
տէրը, 50 տարեկան:

Ա Ն Ն Ա, նորա կինը, 45 տարեկան:

Հ Ա Մ Ա Ս Փ Ի Ի Ռ, նոցա աղջիկը, 16 տարեկան:

Շ Ո Ի Շ Ա Ն, նորա ընկերը, նոյն հասակի:

Ս Մ Բ Ա Տ, Համաափիւռի սիրականը, գեղեցիկ աղա-
մարդ 25 տարեկան:

Մ Ա Ր Թ Ա, նորա մայրը, պառաւ կին:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս Բ Է Գ, Համաափիւռի փեսացուն 40
տարեկան:

Պ. Յ Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն, նորա բարեկամը:

Տ Ի Ր Ա Յ Ո Ի Մ Ա Ր Կ Ո Ս, Աստապատ գիւղի տիրա-
ցուն, տղեղ և հաստափոր. նա հազուատով չէ դանա-
ղանվում միւս գիւղացիներէրից:

Գ Ր Ի Գ Ո Ր, 10 տարեկան աղայ:

Գ Ի Ի Ղ Ա Յ Ի Ն Ե Ր, Կ Ա Ն Ա Յ Ք, Ա Ղ Ձ Ի Կ Ն Ե Ր:

Անցքը պատահումէ 1851 թուին.

—

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ:

(Երասխի ամիր: Աջ կողմը մեծ դաշտ, որի վերայ
հեռու երևումէ Աստասպատ գիւղը: Չախ կողմը
գեղեցիկ բլուրներ, որոնցից մինի վրայ կանգնած
է Կարմիր վանքը: Մէջ տեղը, ջրի մօտ ընկած
է մի մեծ սպիտակ քարափի կտոր: Բեմի ետևի
կողմը ցոյց է տալիս Երասխի բոլոր դաշտը, որի
հեռաւորութեան մէջ կորչումէ գետը: Շատ հե-
ռու բարձրանումեն լեռներ և Մասիսը: Վաղ ա-
ռաւօտ է:

Առաջին երևոյթ:

ՍՄԲԱՏ (գալիս է երգելով):

Կապոյտ երկնքում

Աստղեր են փայլում

Եւ լուսնիակը,

Ամենից սիրուն,

Ամենից փայլուն

է արեգակը:

Կանաչ դաշտերում

Եւ այգիներում

Ծաղիկներ կան շատ,

Բայց չէ ոչ մինը

Վարդի նմանը

Նա է բնութեան զարդ:

Սիրուն աղջիկներ,

Ինչպէս ծաղիկներ,

Ամեն տեղ շատ կան,

Բայց իմ ընտրածը,

Սրտիս սիրածը

Հրեշտակի է նման:

Երկրորդ երկույթ:

ՍՄԲԱՏ Ե ՀԱՄԱՍՓԻԻՌ (գալիս է

կուժը ուսին):

Ս մ բ ա տ (ուրախացած վազում է ա
ռաջ): (Նա սխմում է իւր կուրծքին): Տէս,

ինչպէս վեր ու վեր է թռչում սիրտս ու
ըստ թենից, որ քեզ տեսնում եմ:

Համա սփիւռ: Ո՞ւր ես, Սմբատ, մի
շարժի՞ք է չեմ տեսել քեզ. մոռացել ես
ինձ:

Սմբատ: Սմբատը քեզ մոռանայ:

Համա սփիւռ: Ապա ո՞ւր էիր:

Սմբատ: Գնացել էի Մարանդ: Այն
տեղ մի թուրք վաճառական փող էր պարտ
ինձ. գնացի ստացայ:

Համա սփիւռ: Ա՛խ, Սմբատ, ինչ
պէս ուրախ կ'լինէի, որ դու ձեռք վեր առ
նէիր այդ բանից: Սորանով, քանի անգամ
խնդրել եմ, բայց դու չես լսում ինձ:

Սմբատ: Ի՞նչ ես ուզում, Համա
սփիւռ, ի՞նչ բանից ձեռք վեր առնեմ:

Հ.: Չըզիտե՞ս ինչ է — ծածուկ ապրանք
անցկացնելուց: Դա շատ վտանգաւոր գործ
է, սիրելի: Ասած է, կուժը ամէն օր ջուր
չի բերի, մի օր կը կոտորուի:

Ս.: Վախենում ես, որ ինձ բռնեն, կամ սպանեն զազախները:

Հ.: Հա՛, սիրելի, ես շատ վախենում եմ այդ բանից: Ահա՛ քեզ օրինակ Նէհրամցի կարապետը: Ասում են քսան տարի է, ինչ որ պարապում է այդ բանով և միշտ յաջողում էր նորան, բայց վերջը բռնուեցաւ ապրանքը ձեռիցը խլեցին, իրան էլ պատժեցին և հիմայ ասում են, որ պիտի Սիբիր ուղարկեն նորան:

Ս.: Մի՛ վախենար, հողիս, ինձ հետ չի պատահի այդ բանը:

Հ.: Ա՛խ, չէ, սիրելի, քեզ հետ էլ կարող է պատահել: Թէ ինձ սիրում ես Սմբատ, ձեռը վեր առ, վար ու ցանք արա՛:

Սմբատ: Ես չեմ կարող վար ու ցանք անել: Մի օր որ ձիու վրայ չըլինիմ, այն օրը կորածի պէս է ինձ համար: Ես չեմ ծնած հողագործ լինելու: Բայցի դորանից, այսպէսով աւելի փող եմ ստանում,

քան թէ կարող եմ ստանալ վար ու ցանքից:

Հ ա մ ա ս փ ի լ ու: Բայց այն չես մտա-
ծում, որ այդպէսով ամեն օր վտանգի մէջ
է քո կեանքը: Ես քեզ խնդրում եմ, եթէ
ինձ ձշմարիտ սիրում ես և ցանկանում ես
իմ հանգստութիւնը, ձեռք վեր առ այդ
բանից:

Ս մ ք ա տ. (Հատ ձեռով դրկում է նո-
րա մէջ քը, քնքուշ կերպով): Դու որ խըն-
դրում ես, ես էլ ինչ խօսք սւնիմ: Գիտես
որ կեանքս չեմ խնայի քեզ համար: — Ես
կրկատարեմ քո ցանկութիւնը և կը դառ-
նամ հողագործ, միայն էլի մի շաբաթ ժա-
մանակ տո՛ւր: Ես մինին խոստացել եմ անց-
կացնել նորա ապրանքը և չեմ ուզում խա-
բել նորան:

Հ ա մ ա ս փ ի լ ու: Լա՛ւ, ես տալիս եմ
քեզ քո ուղած ժամանակը, միայն թէ կա-
տարի՛ր իմ խնդիրքը:

Ս մ բ ա տ: Անպատճառ:— Բայց հերիք
է այդ մասին: Հիմայ ուրիշ բանի վրայ խօ-
սինք:

Հ ա մ ա ս փ ի լ ու: Շատ լաւ: Ասա
տեսնիմ ի՞նչ արեցիր, տեսա՞ր:

Ս մ բ ա տ: Տեսայ: Բայց ի՞նչ իւր ա-
սած մարդ է եղել քո հայրը: Երկու ան-
դամ մարդ ուղարկեցի մօտը, և երկու ան-
դամն էլ ասել էր, որ քեզ չի տայ ինձ:
Ես նորան ի՞նչ եմ արել: Անցած կիրակի
օրը պատահեցի նորան և ինքս խնդրեցի
բայց նա անենեին չէր ուզում լսել ինձ:
Վերջը ասաց, որ ոչ մի ժամանակ չի տայ
իւր աղջիկը ինձպէս աւազակին: Ես էլ ու-
զեցի վախեցնել նորան ու ասացի, որ կը
փախցնեմ քեզ:

Հ ա մ ա ս փ ի լ ու: Յետո՞յ:

Ս մ բ ա տ: Ել ոչինչ, այնպէս մնաց բա-

նր: Հիմայ տարակուսել եմ, չըզիտեմ թէ
ինչ անեմ:

Հ ա մ ա ս փ ի լ ու: Ի՞նչ պիտի անենք:
Համբերենք, սիրելի, կարելի է մի օր կակղել
հայրս:

Ս մ բ ա տ: Մինչև երբ համբերենք:
Ես վախենում եմ, որ քեզ խլեն ինձանից:
Չըլինի թէ հայրդ փեսայ է ճարել իւր
համար:

Հ ա մ ա ս փ ի լ ու: Թող ինչքան ու-
զում է ճարէ: Ես բացի քեզանից ուրիշին
չեմ ուզի:

Ս մ բ ա տ: Քո ձեռին ոչինչ չըկայ, սի-
րելի: Քեզ կըստիպեն:

Հ ա մ ա ս փ ի լ ու: Աըստիպեն ու կը
տեսնեն, թէ ինչ կանեմ:

Ս մ բ ա տ: Ինչ կարող ես անել: Աստ-
ուած անի՞ծ է մեր երկրի սովորութիւնը:

Հ ա մ ա ս փ ի լ ու: Ես աւելի լաւ կը

համարեմ մեռնել քան թէ դառնալ ուրիշի կինը:

Ս մ բ ա տ: (ողևորուած): Մեռնեմ քո հոգուն, Համասփիւռ: Այդ որ լսեցի քեզանից, հիմայ էլ ոչինչ բանից չեմ վախենում: Եթէ դու չես ուրանալ ինձ, բոլոր աշխարհը որ դայ, կարող չէ խլել քեզ իմ ձեռից:

Հ ա մ ա ս փ ի լ ու: Այդ մասին միտ միտ կայ: Եթէ դու ձեռը չես վեր առնի ինձանից, ես մինչև մահս քոնն եմ:

Ս մ բ ա տ: Համասփիւռ, շատ անգամ ասել եմ և հիմայ էլ կրկնում եմ մի և նոյնը և վկայ եմ կանչում Արարիչ Աստուած, որ ես ինքս իմ ձեռով կրցցեմ դանակը սրտիս մէջ, եթէ մի բոպէ գոնեա կրմոռանայ նա քեզ:

Հ ա մ ա ս փ ի լ ու: Աստուած ոչ անէ:
— Բայց հիմայ գնա՛, Սմբատ. վախենում եմ, որ տեսնեն մեզ:

Ս մ բ ա տ. (գրկուժէ նորան և համ-
բուրուժէ): Մնաս բարով, (գնուժէ):

Հ ա մ ա ս փ ի լ ու: Գնաս բարով, Աս-
տուած քեզ հետ: (Կարճ ժամանակ մը-
նուժէ կանգնած և նայուժէ Սմբատի ե-
տևից, յետոյ լցնուժէ կուժը և հեռա-
նուժէ):

(Տեսարանը փոխալուժէ: Մի մաքուր դի-
դի սենեակ մահտեսի խաչատուրի տանը:
Սենեակը ունի երկու դուռ, որոնցից մինը
տանուժէ դէպի բակը և պարտէզը, իսկ միւ-
սը դէպի մի ուրիշ սենեակ: Յատակը ծած-
կած է հասարակ դորդերով, աջ կողմը դրած
են երկու հասարակ փայտից շինած աթոռ-
ներ: Պատերի թարեքների վրայ շարած են
կարգով դանազան ապակեղէն, կաւեղէն և
պղնձէ ամաններ, մի կողմը նամանապէս ե-
րևում են դէնքեր: Առաւօտ է):

ԵՐՐՈՐԴ ԵՐԼՈՅԹ :

ՄԱՀՏԵՍԻ ԽԱՉԱՏՈՒՐ (նոր հագնում է
չուխան) :

Այսօր պիտի գնամ Նախիջևան և
բանը վերջացնեմ : Ել աւելի անկարելի է
ուշացնել, եթէ չեմ ուզում, որ վերջը դա-
տարկ մնամ ու զղջամ : Քանի թոնդիրը
տաք է, պէտք է հացը կողը տալ : Թէպէտ
այս խօսքը կինն է ասել, բայց ես ու իմ
Աստուածը շատ խելօք խօսք է : Մարտիրոս
բէգը բոլորովին խելագարուել է աղջկաս
համար, թէպէտ միայն երկու անգամ է ասե-
սել նորան : Ճշմարիտ է, նա արդէն կերել
է մի կնոջ գլուխը և մօտ քառասուն տա-
րեկան տղամարդ է, բայց այսօր իմ մեծն
է և ես նորա ձեռի տակն եմ : Նա թարգ-
ման է մեր կառավարչի մօտ, մի քանի ժա-
մանակից յետոյ կը դառնայ նորա օգնակա-
նը, յետոյ և կառավարիչ : Ել ինչ ասել

գուզէ, որ ես միշտ կրմնամ իմ տեղը: Յե-
տոյ ես գիտեմ:— Շատ կարելի է, որ նորա
ողորմութեամբ մի պարզե էլ ստանամ վզիս,
դեղին, փայլուն, մի փոքր լուսնեակի չափ:
է՛ն կրտեսներք էլի. (մտածում է) բայց ե՞թէ:
— Յետոյ մի կողմից այն անպիտանը: — Եղ-
բայր, հայրը ես եմ, աղջիկը իմն է, ումը
ուզեմ նորան կրտամ, ուզեմ մինչև մահ
տանը կը պահեմ, ո՞վ է ձեռս բռնողը:—
(Ճաղր անելով): Ար փախցնեմ:— Հա՛, ինչ-
պէս չէ, քո հօրն ողորմի, արի մի փորձիր,
տէս թէ գլուխդ քանի՞ կտոր է լինում:—
(Մի կարճ լռութենից յետոյ): Հա՛, հա՛,
պիտի շտապիմ, չըլինի թէ, ո՞վ գիտէ. սա-
տանան հակառակ է. (կանչում է), Աննա՛,
Աննա՛:

Զորրորդ երևոյթ:

ՄԱՀՏԵՍԻ ԽԱԶԱՏՈՒՐ Լ ԱՆՆԱ (մտնում է
ձախ կողմից):

Աննա: Ի՞նչ ես կանչում, մահտեսի,
ի՞նչ կայ:

Մ. Խ ա չ ա տ ու ը ը: Ա յ ս տ ե ղ է կ, ք ա ն
ե մ ա ս ու լ մ:

Ա ն ն ա: Ա ս ա՛ տ ե ս ն ե մ, ի՞նչ կայ. ո՞ւր
ես դնուլմ:

Մ. Խ ա չ ա տ ու ը ը: Ն ա խ ի ջ Լ ա ն: Բ այց
առ ա ջ լ ա ի՛ր, թ է ի ն չ ե մ ա ս ու լ մ: Ե ս ու լ
զ ու լ ե մ Հ ա մ ա ս ի ի Լ ու ի ն մ ա ը դ ու տ ա մ, տ ա ս ն
ու վ եց տ ա ը ե կ ա ն ա ղ ջ ի կ է. ի ս կ լ աւ ժ ա
մ ա ն ա կ ն է:

Ա ն ն ա: Ի հ ա ը կ է: Բ այց թ է ի ն ձ
կ ը հ ա ը ց ն ե ս, մ ի վ ի ո ջ ը է լ ա ն ց է կ ա ց ե լ ժ ա
մ ա ն ա կ ը: Թ է չ ե ս մ ու ա ց ե լ, ե ս տ ա ս ն ե ը ե ք
տ ա ը ե կ ա ն է ի, ե ը ք ո ը մ ե ղ պ ս ա կ ե ց ի ն:—
Բ այց ո՞ւ մ ն ե ս ու լ զ ու լ մ տ ա լ:

Մ. Խ ա չ ա տ ու ը ը: Մ ի շ ա տ լ աւ մ ա ը դ
ե մ ճ ա ը ե լ ն ո ը ա հ ա մ ա ը. մ ե ծ մ ա ը դ, ա ս
տ ի ճ ա ն ա լ ո ը:

Ա ն ն ա. (ուրախացած): Ի՞նչ ես ա
ս ու լ մ, ա ս տ ի ճ ա ն ա լ ո՞ւր, լ ա՛ւ է: Բ այց ք ա ն ի՞
ա ս տ ի ճ ա ն ու ն ի: Տ ի ը ա ց ու Մ ա ը կ ո ս ի հ ա մ ա ը

ասուամեն, որ չորս ասախճան ունի. իսկ նա՞:

Մ. Խ ա չ ա տ ու ը ը: Կանց, կանց, մի՛
շտապիր, յիմար կի՛ն, ուրախութենից չը
գիտես, թէ ինչ անես: Ահա՛ այդ բանից էի
վախենում, որ մինչև այսօր ոչ ինչ չէի
ասում քեզ: Ո՞վ չըգիտէ, որ կնոջը մի ծա-
ծուկ բան ասես, մի և նոյն է թէ հազար
մարդու առաջ գոռաս հրապարակի մէջ,
որովհետև էգուց բոլոր աշխարհը կիմանայ
այդ բանը: Սուտ չէ ասած, որ կինը կարճ
խելք ունի, որովհետև մազերը երկայն են:

Ա ն ն ա. Լ աւ է, լաւ, թէ Աստուած
կը սիրես էլ մի՛ երկարացնիլ բանը, ասա՛,
ես լսում եմ:

Մ. Խ ա չ ա տ ու ը ը: Եթէ դու այնպէս
էլ լաւ լսում ես, ինչպէս որ տեսնում ես,
ապա ի դուր է իմ ասելը:

Ա ն ն ա. Ի՞նչպէս:

Մ. Խ ա չ ա տ ու ը ը: Այնպէս, որ դու
երկու աչքով կոյր ես և ոչ ինչ չես տես

նում, թէ ինչ է պատահում քո չորս
կողմը: Բայց ես ահա երկու ամիս է նկատում
եմ, որ սատանան մտել է աղջկանդ
զլուխը և տակն ու վրայ է արել նորա ու-
ղեղը:

Ա ն ն ա: Ի՞նչ, ի՞նչ, (երեսը խաչա-
կնքելով): Աստուած մի՛ արասցէ, ի՞նչ ես
ասում:

Մ. Խ ա չ ա տ ու ը ը: Չե՞ս հասկանում,
ինչ է: Բայց մի՛ կարիր խօսքս, նստիր. (եր-
կուսն էլ նստում են): — Հա՛, սատանան մը-
տել է նորա զլուխը և տակն ու վրայ է
արել նորա ուղեղը:

Ա ն ն ա. Թէ Աստուած սիրես, մահ-
տեսի, պարզ խօսիր. ես չեմ հասկանում
քո ասածը:

Մ. Խ ա չ ա տ ու ը ը: Դու երբ ես բան
հասկացել, որ հիմայ հասկանաս: Աստ-
ուած այդ շնորհքը չէ տուել քեզ:

Ա ն ն ա: Ինչպէս հասկանամ, որ ա-

աւաջ սկսեցիր խօսել Համասփիւռի վրայ,
յետոյ յանկարծ խօսքդ փոխեցիր սատանայի
վրայ: Նա մեզ հետ ի՞նչ բան ունի: Աստ-
ուած անիծէ նորան:

Մ. Խ ա չ ա տ ու ը ը: Իմ ասածը նո-
ցանից չէ, այլ մի շատ սիրուն և երիտա-
սարդ սատանայ է քարուքանդ Ջուղայից,
որի աչքում շատ համեղ կտոր է երևացել
քո Համասփիւռը, և որ վառուած նորա սի-
րով, ծածուկ ճանապարհով ձգել է իւր
սէրը և քո աղջկայ սրտի մէջ:

Ա. ն ն ա: Հիմայ հասկացայ, թէ ինչ
ես ուզում ասել: Դու կարծեմ խօսում ես
Ջուղայեցի Սմբատի մասին, որ մի քանի
անգամ մարդ էր ուղարկել քեզ մօտ և
խնդրում էր, որ Համասփիւռին նորան տաս,
և որի խնդիրքը դու մերժեցիր: Բայց ինչո՞ւ
մեղաւոր է այդ քանի մէջ իմ աղջկի:
որ ասում ես, թէ Համասփիւռն
բում է նորան, սխալվում ես,

Ե 0 0 9 1 7 2 9 4 3 5 8 8 2



Ես նրան այդպէս չեմ մեծացրել: Հաւատան
ինձ, որ նա վախենում է էլ նայել տղա-
մարդու երեսին:

Մ. Խ ա չ ա տ ու ը ը: Այդ էս չըզիտեմ,
բայց լաւ տեսնում եմ, որ մի այնպէս բան
կայ այդտեղ: Վարդուց է Համասփիւռը փո-
խուել է: Առաջ նա միշտ ուրախ էր, բայց
հիմայ միշտ տխուր է և անդադար ախ ու
վախ է քաշում:

Ա ն ն ա. Ի՞նչ էս կարծում, ո՞ւմ հա-
մար են նորա ախ ու վախը:

Մ. Խ ա չ ա տ ու ը ը: Ա՛ կին, դու միշտ
կարծում ես: Այստեղ կարծել հարկաւոր
է, երբ որ բանը պարզ ու հասկանալի է:
Ես հաստատ զիտեմ, որ այն անպիտանը,
որ համարձակուել է գողիպէս ներս սողալ
այդչապ սրտի մէջ և պղտորել է նորա միտ-
քը, է այն աւազակ փուշ կենդանի Ջու-
ղայեցի Սմբատը, որ նորերումս կրկին մարդ

էր ուղարկել ինձ մօտ մի և նոյն բանի
համար:

Ա՛ն՛ն ա: Յետոյ:

Մ. Խ ա չ ա ա տ ու ը թ . Յետոյ ի՞նչ :
Յայտնի բան է, որ չընդունեցի նորա խըն-
դիրքը: Ես նորապէսին աղջիկ կը տամ: Նա
մի օր կամ կերակուր կը դառնայ վազրե-
րին, որոնց որսում է կամ ղաղախներից մի
գնդակ կը ստանայ գլխումը ապրանք փախ-
ցնելու ժամանակ:

Ա՛ն՛ն ա . Այդ ի հարկէ այդպէս է:

Մ. Խ ա չ ա տ ու ը թ : Բայց հիմայ լսիր
նորա անամօթութիւնը: Անցած կիրակի
օրը երեկոյեան ժամանակ ձիով գալիս էի
Նախիջլեանից, որ յանկարծ կտրեց ճանա-
պարհս: Ճշմարիտն ասեմ մի փոքր վախն-
ցայ, կարծեցի թէ աւազակ է — բայց այդ
Սմբատն էր, որ էլի կրկնեց իւր խնդիրքը:
Ես ասացի նորան, որ ոչ մի ժամանակ չեմ
տալ իմ աղջիկը նորա պէս աւազակին: » Ա՛ն՛ն .

Թող ես աւագակ լինիմք քո խօսքով, « առ
սաց նա, «բայց իմացիր, որ եթէ մի բան
կամքով չեն տալիս աւագակին, այն ժամա-
նակ նա խլում է այն բանը». առաց և իս-
կոյն հեռացաւ:

Ա ն ն ա . Տէր Աստուած, դու աղա-
տիր մեզ այս փորձանքից

Մ . Խ ա չ ա տ ու ը ը : Ես յոյս ունիմ,
որ նա կազատէ մեզ, եթէ մենք խելքով
կը շարժինք: — Մարտիրոս բէգը երկու ան-
գամ տեսել է Համասփիւռին, Նոյայ տա-
պանում ու Նախափկայում և շատ հաւա-
նել է նորան:

Ա ն ն ա : Մի՞թէ, ինչ ես ասում:
Մարտիրոս բէգը, մեր կառավարէ թարգ-
մանը: Փառք քեզ Աստուած, ո՞վ կը սպա-
սէր այդ բաղդաւորութեանը:

Մ . Խ ա չ ա տ ու ը ը : Բայց հիմայ
բանն այն է, որ ձեռից շեղանք այդ բաղ-
դը: Մեր անպատճառ պիտի շտապինք, որ

կամայն աւագակ Սմբատը մի փորձանք
չը բերէ մեր գլխին, կամ Մարտիրոս բէգը
չը փոխէ իւր միտքը, որովհետեւ գիտես,
որ նա մեծ մարդ է և շատ խորը կարգա-
ցած, բոլոր օրէնքները անգիր գիտէ:

Ա ն ն ա . Ա'խ, մահտեսի, ինչպէս
բաղդաւոր կը լինի մեր աղջիկը, եթէ իրաւ
գլուխ դայ այդ բանը: Իմ Համասփիւռը կը
դառնայ մեծ մարդու կին, կապրի քաղա-
քի մէջ և նորա ծանօթները կը լինին աս-
տիճանաւորների և իշխանների կանայքը:
Ինչպէս կը զարմանայ բոլոր գիւղը, եթէ ի-
մանայ այս բանը.

Մ . Խ ա չ ա տ ու ը ը . (Ճաղրանելով).
Ի հարկէ դու կաշխատես, որ մի ժամի
մէջ բոլոր գիւղը իմանայ այդ բանը,

Ա ն ն ա . (մի փոքր վիրաւորուած).
Փառք քեզ Աստուած: Ինչ բերանը պատ-
ռած կին ինձ տեսար, որ այդ խօսքն աս-
տումես ինձ: Իմ գլխի թշնամին եմ կը:

տեսնեա, որ ես իմանում եմ լեզուս պահել:

Մ. Խ ա չ ա տ ու ը ը: Լ ա՛ւ կը տեսնեմ: — Հիմայ ես դնում եմ Մարտիրոս բէգի մօտ, որ բանը վերջացնեմ, այնպէս որ էզուց նշանը բերէ:

Ա ն ն ա. Այդպէս շուտ ինչպէս կարելի է: Թող մի փոքր մտածենք, բարեկամ ու ազգականներ ունինք, հարցնենք, տեսնենք, թէ նորա ինչ են ասում:

Մ. Խ ա չ ա տ ու ը ը: Իմ բանը յաջողի, ով ինչ ուզում է թող ասէ: Ես իմ խելքն ունիմ, ու ինքս ամէն բան մտածել ու վճռել եմ: Քանի շուտ լինի բանը, այնքան մեր օգուան է: Հիմայ ես դնում եմ և մինչև իրիկնապահը տուն չեմ դալ. իսկ դու, իմ Աննա, մինչև իմ դալը պատրաստիր Համասփիւռին, լաւ հասկացրու նորան, թէ ո՞վ է Մարտիրոս բէգը և թէ ինչպէս բաղդաւոր կը լինի նորա ձեռին:

Ա ն ն ա: Շատ լաւ, աչքիս վրայ: Այդ

Մասին միամիտ կաց, ինչպէս ուզում ես, այնպէս կը լինի, միայն թէ Աստուած յաջողէր մեր գործին. (վեր են կենում տեղերից):

Մ. Խ ա չ ա տ ու ը ը : Ա հ ա՛ Համասփիւռն էլ գայիս է :

Հինգերորդ երևոյթ :

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ և ՀԱՄԱՍՓԻԻՌԸ (մանում են քակի կողմից):

Մ. Խ ա չ ա տ ու ը ը : Բարի լոյս, Համասփիւռ, այսօր քեզ չեմ տեսել. այդ ո՞ւր էիր գնացել այսպէս վաղ :

Հ ա մ ա ս փ ի լ ու . Գնացել էի գետիցը ջուր բերելու :

Մ. Խ ա չ ա տ ու ը ը . Գու շատ սիրում ես Երասխը, ինչպէս տեսնում եմ, որ րովհետև մօտիկ աղբիւրը թողած, միշտ նորա ջուրն են բերում :

Ա ն ն ա . Գետի ջուրը աւելի համեղ և առողջարար է, քան թէ աղբիւրինը :

Մ. Խ ա չ ա տ ու ը ր : Չը գիտեմ. ինձ
համար ամէն ջուր մնասաւոր է, բայց խա-
ղողն ջրից :

Ա ն ն ա . Վա՛ն, հերիք է. մահտեսի,
դորա ժամանակը չէ հիմայ : Գնա՛, ուր որ
գնալու ես :

Մ. Խ ա չ ա տ ու ը ը , (սուր աչքով նա-
յելով Համասիխու վրայ) : Բայց քեզ, ինչ-
պէս տեսնումեմ, մնաս է աալիս Երասխի
ջուրը, Համասիխու .

Հ ա մ ա ս փ ի լ ու . Ի՞նձ : Ամենեին
չէ : Ես կատարեալ առողջ եմ :

Մ. Խ ա չ ա տ ու ը ր : Չը գիտեմ. բայց
դու միշտ տխուր ես երևում իմ աչ-
քումս, և քանի ժամանակ է ահա՛ ել չեմ
լսում քո երգերը :

Հ ա մ ա ս փ ի լ ու : Հաւատան, հայր,
որ ոչ մի տեղս չէ ցաւում :

Մ. Խ ա չ ա տ ու ը ր . Աստուած տայ,
որ այդպէս լինի : Բայց մի փոփոխութիւն

տե՛սնու՛մ եմ քո մէջ, Համասիփիւռ, որ առ
մե՛նեկին չեմ հաւանում:

Հ ա մ ա ս փ ի լ ու . (այլայլա՛ծ): Ի՞նչ
փոփոխու՛թիւն, սիրելի հայր:

Մ. Խ ա չ ա տ ու ը . (Շուտ): Այդ մա-
սին մօրդ հարցրո՛ւ, նա կասէ քեզ: Եւ
շտապում եմ: Մնա՛ք բարով. (գնու՛մ է):

Ա ն ն ա : Գնաս բարով:

Վեցերորդ երևոյթ:

Ա ն ն Ա Է Հ Ա Մ Ա Ս Փ Ի Ի Ռ :

Հ ա մ ա ս փ ի լ ու : Մայր, ո՞ւր է զը-
նում հայրս:

Ա ն ն ա : Նախիջևան:

Հ ա մ ա ս փ ի լ ու : Ի՞նչ բանի համար:

Ա ն ն ա : Գու ինչ հարցնող ես, ինչ
քո բանն է: Այդ շատ վատ սովորութիւն
է: Քո հասակի աղջկան ամենեկին չի վայե-
լի հարց ու փորձ անել ամեն բանի մասին:
— Յետոյ կիմանաս:

Հ ա մ ա ս փ ի լ ու ռ : Մեղայ, ներիր, սիրելի մայր, էլ ուրիշ անգամ չեմ հարցնի:

Ա ն ն ա : Հիմայ նստիր կարդ կարիր, աշխատիր որ մինչև էգուց պատրաստ լինի շատ հարկաւոր կը լինի քեզ:

Հ ա մ ա ս փ ի լ ու ռ : Զրլինի թէ գնալու ենք Սուրբ Կարապետ ուխտ:

Ա ն ն ա - (բարկացած): Հա՛, չէ՛: Ելե՛սկսեցիր հարց ու փորձ անել: Քեզ ինչ որ հրամայում են, այն արա՛: Գու պէտքէ ուրախ լինիս և շնորհակալ, որ քեզ միշտ զարդարած ենք պահում ինչպէս վարդ:

Հ ա մ ա ս փ ի լ ու ռ : Ես շատ շնորհակալ եմ, սիրելի մայր:

Ա ն ն ա : Հա՛, միայն խօսքով, բայց քո վարքիցը չէ երևում այդ բանը:

Հ ա մ ա ս փ ի լ ու ռ : Իմ վարքը: Ես ի՞նչ եմ անում:

Ա ն ն ա . Ինձ մի՛ հարցներ, քո սրտի՞ն հարցրա՛ւ :

Համասփիւռ. Իժ Խղճմտանքը
Մարուր է:

Աննա. (Մի կողմը): Տեսնեմ ճշմարիտ էր ասուամ մահտեսին թէ չէ: (Համասփիւռին): Ես այդ իսկոյն կը տեսնեմ: Լաւ նայիր երեսիս: (Համասփիւռը նայում է նորա երեսին): Համասփիւռ ճշմարիտն ասա՛, տես չըխաբես ինձ, թէ չէ իսկոյն կիմանամ. ճանաչումե՞ս Ջուղայեցի Սմբատին:

Համասփիւռ. (Սաստիկ շփոթփում է և չէ պատասխանում):

Աննա. Ի՞նչի այդպէս յանկարծ կարմրեցար, պատասխան տո՛ւր, բայց էլի կրկնում եմ, սուտ չասե՛ս:

Համասփիւռ. (Մի կողմը). Ի՞նչի եմ թագցնում: (Մօրը): Գու պահանջում ես, որ ճշմարիտն ասեմ, ուրեմն իմացիր...:

Աննա. Ասա՛, ասա՛ վերջացրո՛ւ խօսքդ:

Համասփիւռ: Ես ճանաչում եմ նորան:

Ա ն ն ա . Ռ ո ճ վ ա յ . ի մ գ լ խ ի ն ու ա թ լ ի ն :
Ա ղ ջ ի , ա յ դ ի ն չ ա ս ա ց ի ը , շ ե ս ա մ ա չ ու մ :
Ա ' յ ս ե մ ա հ ը տ ա ն է ք ե զ , ո Ր ա յ դ խ օ ս ք ը
չ է ը դ ու ը ս ե կ ե լ ք ո ք ե թ ա ն ի ց : Շ ա տ լ աւ է ,
Ե թ ե ս դ պ ա ը զ կ ե ն ա յ : Ա յ դ է ք ո շ ն ո Ր հ ա
կ ա լ ու թ իւ ն ը , ա յ դ պ է ս ե ս վ ճ ա թ ու մ մ ե թ լ ա
ւ ու թ իւ ն ը : Ա յ դ յ ո յ ս ն ու ն է ի ն ք ք ե զ ա ն ի ց ,
Հ ա մ ա ս փ իւ ու : — Եւ ե ս , յ ի մ ա թ կ ի ն ս , չ է ի
հ աւ ա տ ու մ ք ո հ օ թ ը և հ ի մ ա յ ք ո ս ե փ ա
կ ա ն ք ե թ ա ն ի ց ե մ լ ս ու մ ա յ դ ք ա ն ը : — Դ ու ,
մ ե թ մ ի հ ա տ զ աւ ա կ ը , մ ե թ ք ո լ ո Ր յ ո յ ս ը ու
մ ի ս ի թ ա թ ու թ իւ ն ը մ ե թ ծ ե թ ու թ ե ա ն օ թ ե թ ու մ
խ ա յ տ ա ու ա կ ու մ ե ս մ ե թ ա ն ա թ ա տ ա ն ու ն ը , ո Ր
մ ի ն չ և ա յ ս օ թ պ ա հ ա պ ա ն ե լ ե ն ք ի ն չ ա է ս դ ա ն ձ :
Ա յ ս ու հ ե տ և պ ի տ ի ա ու ա կ դ ա ու ն ա ն ք ա մ ե ն ի
ք ե թ ա ն ու մ : Ե թ է ա յ դ պ է ս է , ե թ ա ն ի թ է ջ ու ը
է ի ը կ ա թ ու ե լ յ ա թ դ ա ն զ ի ս մ է ջ , ո Ր ք ե զ
չ է ի ծ ն ե լ :

Հ ա մ ա ս փ իւ ու . (Ս ա ս ա թ ի կ շ ա թ ժ ա ծ
ք ա ն ու մ է մ օ թ ձ ե ո ը և հ ա մ ք ու ը ը մ է) : Ա ' խ ,

մայր, մի' անիճեց ինձ. ես մեղաւոր չեմ :

Ա ն ն ա . Մեղաւոր ես թէ չէ, ես միտք չունիմ երկար խօսել հետդ այդ մասին - այլ յայտնում եմ իմ ու հօրդ կողմից, որ յաւիտեան պիտի մոռանաս նորան և էլ ամենևին չը յիշես նորա անունը, եթէ չես ուզում պատժուիլ ինչպէս հարկն է :

Հ ա մ ա ս փ ի ռ ո : Ա'խ, մայր, չես ճանաչում նորան, թէ չէ այդ բանը էիք ասի :

Ա ն ն ա . Չայնդ կարիք անամո՞՞ք ինձ, աղջիկ : Թող սև մահը ճանաչէ նորան, ես չեմ կամենում : Այստեղ ել չհամարձակուիս գնալ Նրասիփակիր, խնայար ինչ եմ ասում : -- Հիմայ ես գնում եմ աղբիւրի վրայ մի քանի կտոր բան ունիմ լուանալու, աչքդ սան վրայ լինի ու բանիդ կ'սց. ես շատ չեմ ուշանալ : (գնում է) :

Եօթներորդ երևոյթ :

ՀԱՄԱՍՓԻԻՌ (մենակ վեր է առնում
կարը, բայց չէ կարում) :

Ա՛խ ինչ տարաբաղդ աղջիկ եմ ես, չիմայ ի՞նչ կը լինի իմ ճարը. որ ծնողքս հակառակ են իմ սիրուն: Հա՛ ես շատ տարաբաղդ եմ, որովհետև միթէ կարելի է բաղդաւորութիւն համարել այն, որ ես միշտ կուշտ եմ, լաւ հաղնուած, քան թէ իմ միւս ընկեր աղջիկները, և հիմայ էլ ահա՛ կարում եմ ինձ համար նոր դէյրա: (Զգում է կարը մի կողմը և վեր է կենում տեղից) : Ի հարկէ ես չեմ կասկածում, որ նորա ինձ սիրում են, բայց Տէ՛ր Աստուած, ինչ պատճառով քանդում են իմ բաղդաւորութիւններ: — «Յաւիտեան՝ պիտի մոռանաս նորան և էլ ամենևին չը յիշես նորանունը», ասաց մայրս: — Բայց ի՞նչի, ի՞նչի պիտի մոռանամ նորան, ի՞նչի չը սիրեմ:

Մեքատին, ո՞վ կայ մեր զիւղումը նորա հա-
տը:

Ա՛խ երանի թէ ամենեին չէի ճանա-
չել նորան: Սկսած այն օրից, երբ ես ա-
ռաջին անգամ տեսայ նորան, յաւիտեան
թռաւ իմ հանգստութիւնը: — Բայց էլի
երջանիկ եմ համարում ինձ, որ ճանաչեցի:
նորան: (Ոգևորուած). Հա՛, հա՛ ես շատ եր-
ջանիկ եմ—նա ինձ այնպէս սրտով սիրումէ:
Ո՛հ ինչքան քաղցրութիւն կայ այս խօս-
քերի մէջ, ինչպէս անասման բաղդաւոր
եմ զգում ինձ, երբ որ մտածում եմ, որ նա
ինձ սիրում է:—

Բայց ա՛խ, ճնօղքս չեն ուզում տալ
ինձ նորան: Երևի այսպէս է դրած ճակա-
տիս վրայ, որ ես երբէք պիտի չարժանանամ
սրտիս սիրածին, և ի զուր չէր, որ վիճակի
ժամանակ հանեց հարսը իմ ոսկէ մատա-
նին այս խօսքերից յետոյ. (առանց երգելու)

Այս քաղաքը բարձր տեղ է.

Զուրը հիւանդի դեղ է.

Սիրած, սիրածի չեն տա,
Այս ինչ կուսպաշտ տեղ է:

Բայց ոչինչ, թող նորա մերժեն նորան:
Ես էլ, քանի որ շունչս բերանիս է,
չեմ ուզի ուրիշին: Իմ սիրտը միշտ նուիրած
կը լինի նորան: Իսկ եթէ կը ստիպեն,
այն ժամանակ ես ինքս կը տեսնեմ իմ գլխի
ճարդ: (Մտնում է Շուշանը):

Ութերորդ երևոյթ:

Հ Ա Մ Ա Ս Փ Ի Ի Ռ Է Շ Ո Ի Շ Ա Ն:

Շ ու շ ա ն: Բարի լոյս, Համասփիւռ:

Հ ա մ ա ս փ ի լ ու: (Առաջ գնալով և
համբուրելով նորան): Ախ բարով, սիրելի
Շուշան: Ի՞նչպէս ես, լա՛ւ ես:

Շ ու շ ա ն: Այնպէս չէ, ինչպէս դու:
Ես ամաչում եմ խոստովանել, որ համա-
բեայ թէ նախանձում եմ քեզ: Երանի քեզ,
որ ոչ ինչ ցաւ չունիս սրտումդ. երանի
քեզ որ ուրախ ես:

Համասփիւռ: Չարմանում եմ: Այդ
ինչ եմ լսում: Այսօր առաջին անգամն եմ
տեսնում քեզ այդպէս. — Բայց ի՞նչ գիտես,
որ ես ուրախ եմ, կամ ի՞նչի դու էլ չես
կարող ուրախանալ:

Ե ու շ ա ն: Չեմ կարող, Համասփիւռ,
չեմ կարող. որովհետեւ դու և ես մին չենք:
Դու բաղդաւոր ես և ոչինչ պատճառ չու-
նիս տխրելու. իսկ ես ամենաթշուառ աղ-
ջիկն եմ երկնքի տակ:

Համասփիւռ. (Կարեկցութեամբ)
Աղջի ի՞նչ կայ, ինչ թշուառութիւն է պա-
տահել քեզ:

Ե ու շ ա ն. Ա՛խ ամենամեծ թշուառ-
ութիւն որ կարող է միայն պատահել ինձ
նման խեղճ աղջկան: (Նրկիւղալի նայում է
իւր չորս կղմբ:) Բայց արդեօք մայրդ տանը չէ՞

Համասփիւռ: Չէ՛, մի վախնար. նա
աղբիւրի վրայ լուացք է անում:

Ե ու շ ա ն: Համասփիւռ, իմ սիրելի քոյր

դու լաւ դիտես, որ ես քեզանից աւելի ու-
րիշ սրտակից ընկեր չունիմ բոլոր դիւզի
մէջ և ես ամենեւին չեմ կասկածում, որ
դու էլ սիրումես ինձ, ինչպէս քո քրոջը:
Մինչև այսօր ոչ ինչ ծածուկ բան չէ եղել
մեր երկուսի մէջ: Ես կարողեմ հաւատալ
քեզ իմ սրտի խորհուրդը. (Ընկնումէ շա-
մասփիւռի վրայ և փաթաթվում է նորա
վզին ողբալով:) Համասփիւռ, քոյր, փրկէ ինձ,
աղաչում եմ քեզ. ասա՛ ի՞նչ անեմ, ծը-
նողքս վաճառում են ինձ:

Հ ա մ ա ս փ ի լ ու: Հանդարտուիր, Շու-
շան, մի՛ լաց լիներ:

Շ ու շ ա ն: Հա՛, հա՛, ինձ վաճառում
են, — ինձ ուզում են մարդու տալ, և ինչ
ես կարծում ո՞ւմք — տիրացու Մարկոսին,
որ իմ հօր հասակի մարդ է:

Հ ա մ ա ս փ ի լ ու. Ի՞նչ: Դու իհարկէ
համաձայն չես:

Շ ու շ ա ն: Ինձ ո՞վ է հարցնում,

համաձայն եմ թէ չէ: Բայց թող պատմեմ բոլորը սկզբից:

Հ ա մ ա ս փ ի լ ու. Պատմի՛ր ես ազանջ եմ դնում:

Շ ու շ ա ն: Ահա մի քանի շաբաթ է տեսնում էի, որ Տիրացու Մարկոսի մայրը շուտ շուտ դալիս էր մեր տուն և ծածուկ ինչ որ խօսում էր մօրս հետ: — Ինձ միշտ մայրս դուրս էր ուղարկում, երբոր նա դալիս էր: — Յայտնի բան է, որ ես չէի հասկանում դորա պատճառը, բայց մի ծածուկ ձայն կարծես թէ ասում էր ինձ, որ այդ դալ ու դնալու պատճառը այնպէս բան է, որ սաստիկ կը ցաւեցնէ իմ սիրտը: Ա՛խ, իմ սիրտը չը խաբեց ինձ: Այսօր մայրս կանչեց ինձ իւր մօտ ու ասաց, «Շուշան, ուրախացիր, որդեակ, Աստուած կամեցաւ բաղդաւորել քեզ. քեզ տալիս ենք տիրացու Մարկոսին, և մի քանի օրից յետոյ կը բերեն քո նշանը:

Հ ա մ ա ս փ ի լ ու. Յետոյ դու ի՞նչ ասացիր:

Շ ու շ ա ն: Նրանի թէ իսկոյն գետինը
մտնէի, քան թէ լսէի այդ խօսքերը: Աար-
ծես թէ եփ տուած ջուր ածեցին վրաս:
Ես սկսեցի լաց լինել և ասացի, որ լաւ է կը
մեռնիմ, քան թէ կը դառնամ նորա կինը:
Բայց մայրս սաստիկ բարկացաւ ու ծեծեց ինձ:

Հ ա մ ա ս փ ի լ ու ի ս ե դ ճ Շ ու շ ա ն .

Շ ու շ ա ն: „ Ինչպէս համարձակվումես,
անպիտան աղջիկ, ընդդէմ կենալ քո հօրն
ու մօր կամքին, „ գողաց ինձ վրայ մայրս:
„ Գիտե՞ս, որ տիրացու Մարկոսը վարդապետ
և ուսեալ մարդ է և պսակուելուց յետոյ
կարճ միջոցում քահանայ կը ձեռնադրուի
և դու կը լինիս տէրտերակին: Մեր գիւղի
աղջիկները բաղդաւոր կը համարէին իրանց,
եթէ արժանանային այդ պատուին, բայց դու
քրքրվում ես: Գիտես թէ որքան գլուխ ենք
ցաւեցրել ես ու քո հայրը, մինչև որ գլուխ
եկաւ այդ բանը: Ուրեմն ձայնդ կտրի՛ր, թէ
չէ, եթէ հայրդ իմանայ քո անհնազանդու-

Թիւնը, կը մորթէ քեզ: » — Մի կողմից ծեծը, միւս կողմից էլ այս խօսքերը լողորովին խլացրին ինձ: Ես գնացի մի կողմը և դառն արտասուելով լաց էի լինում իմ տարաբաղդութեան վրայ, մինչև որ էլ արտասուք չը մնաց աչքերիս մէջ: Հիմայ եկել եմ քեզ մօտ և խնդրում եմ, մի հնար ցոյց տուր, թէ ինչպէս ազատուեմ ես այս փորձանքից:

Հ ա մ ա ս փ ի լ ու . Մի՛ յուսահատուիր, սիրելի Շուշան, այդ այնքան դժուար չէ, ինչքան թվում է քեզ միայն հարկաւոր է որ դու հաստատ մնաս խօսքիդ վրայ: Տիրացուն ինքը յետ կը կանգնի, եթէ իմանայ, որ դու չես ուզում նորան: — Բայց չե՞ս քննել քո սիրտը, թէ ի՞նչ պատճառով ընդդէմ է քեզ այդ ամուսնութիւնը: Ձը լինի՞ թէ ուրիշի վրայ աչք ունիս:

Շ ու շ ա ն . Ձէ՛ չէ՛, ես ոչ ոքի վրայ աչք չունիմ, բայց այն մարդուն ատում եմ, ես չեմ կարող սիրել նորան: Ա՛խ, ասա ինչպէս ազատուեմ նորա ձեռից:

Համասփիւռ: Առաջ աշխատիր,
եթէ կարելի է փոխել. քո հօրն ու մօր
միտքը, եթէ այդ չըյաջողի, այն ժամանակ
հաստատ ու փճապէս ասան, որ չես ուզի,
նորան, և ոչ ոք կարող չէ ստիպել քեզ:

Շուշան: Ի՞նչ ես ասում, աղջի:
Ի՞նչպէս կարող եմ հակառակ կենալ իմ
հօրը. Ա՛խ, դու չես ձանաչում նորան:
Մայրս սուտ չէր ասում:—Նա ինձ իւր ձե-
ռով կը մորթէ:

Համասփիւռ: Ապա քո միտքն ի՞նչ
է: Կուզե՞ս տիրացու Մարկոսին:

Շուշան: Ա՛խ, չէ, ես այդ չեմ ա-
սում: Բայց . . . :

Համասփիւռ: Բայց ի՞նչ Շուշան:

Շուշան: Ա՛խ, Աստուած, ի՞նչ անեմ:
Ինչպէս ողորմելի եմ, (ընկնում է մտած-
մունքի մէջ, յետոյ հաստատ ձայնով): Ես
կը խեղդուիմ, Համասփիւռ:

Համասփիւռ. (վախեցած) Վոյ, աղ-
ջի, այդ ինչ ես ասում:

Շուշան: Հա, ես կրնկնեմ Երասխի
մէջ: Այն կեանքը, որ իմ ծնողքս պատ-
րաստում են ինձ համար, աւելի լաւ է, քան
թէ մահը: Այժմ նորա ինձ չեն խղճում.
Իսկ այն ժամանակ գոնեայ մի քանի արտա-
սուք կը թափեն դիակիս վրայ:

Համասփիւռ: Չէ, սիրելի Շուշան,
թէ Աստուած կը սիրես, դէն ձգիր այդ միտ-
քը: Ինչի այդպէս շուտ յոյսդ կտրում ես.
դեռ ժամանակ շատ կայ, ո՞վ գիտէ թէ
ինչ կը պատահի:

Շուշան: Ա՛խ, ես էլ յոյս չունիմ
եւ գիտեմ, որ հայրս չի փոխի իւր միտքը:
Իմ վերջը մահ է:

Համասփիւռ: Բայց այդ շատ մեծ
մեղք է, Շուշան:

Շուշան: Կաւ գիտեմ, Համասփիւռ,
բայց ինչ անեմ, որ ինձ ստիպում են: Մի-

Թէ ես մեղաւոր եմ, որ չեմ կարող սիրել
Մարկոսին: Աստուած աւելի բարի է, քան
Թէ մարդիկ: Նա կրներէ ինձ իմ մեղքը.
(Լավում է բակից Աննայի ձայնը, որ կան-
չում է. «Համասփիւռ, Համասփիւռ»), Ահա՛
մայրդ եկել է կանչում է: Մնաս բարով, ես
գնում եմ:

Համասփիւռ. Բայց Թէ ինձ կը սի-
րես, մի աներ այդ բանը: Մենք էլի կիսօսինք
այդ մասին: Սիրող պինդ պահիր, սիրելի
Շուշան: Աստուած ողորմած է: (Գուրս են
գնում):

(Վարազդոյրը ցած է ընկնում):

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ:

(Մի պարտէզ մահատեսի խաչատուրի տան
առաջ: Մէջ տեղը կանգնած են երկու մեծ
ծառեր, որոնց ստուերի տակ փռած է մի
գորգ: Ինքը տունը երևում է բեմի ետևի
կողմը ծառերի միջով: Մօտիկ առուի մէջ
վազում է ջուրը: Իրիկնապահ է, արեգակը
մօտ է մայր մտնելուն):

Առաջին երևոյթ:

ՀԱՄԱՍՓԻՒՌ (նստած կարում է և
երգում է մի և նոյն ժամանակ):

Ո՞վ դու իմ կեանքիս անգին ժամանակ,
Ո՞վ իմ մանկութիւն, ա՛խ թռար արագ:
Անհոգս երեխայ ապրում էի ևս
Միշտ ուրախ, զուարթ ու ծիծաղերես,
Հոգիս էր խաղաղ և սիրտս հանդարտ,
Առանց ցանկութեան ու վրշտից աղատ:

Բայց այժմ, ա՛խ ի՛նչպէս փոխուել է այստեղ,
Անարատ սիրտս ինչպէս մահադեղ
Այրում, մաշում է սիրոյ վառ կրակը,
Յանկու թիւնների սաստիկ յորձանքը
Ալեկոծում է կուրծքս անդադար.
Ա՛խ չունիմ հանգիստ, կորած եմ անձար :

Ա՛խ ի՞նչի այսպէս սիրտս դողում է,
Չը լինի՞ թէ ինձ մի փորձանք սպասում է.
Գուցէ ինձ բողոք անհաւատարիմ
Խաբում է և նա չէ լինելու իմ.
Գուցէ այս սիրտը, նուիրած նորան,
Վերջը պիտ՛ դառնայ սիրոյս գերեզման :

Ե՛կ իմ սիրական, ե՛կ իմ աչքի լոյս,
Հասիր օգնու թիւն տառապեալ հոգոյս.
Բայց ա՛խ հեռու ես դու այժմ ինձանից,
Եւ չես կարող դալ մխիթարել ինձ.
Եւ խեղճ աղջկադ հառաչանքները
Չեն բերում քեզ մօտ մեղմիկ հողմերը :

(Վերջին խօսքերի ժամանակ բացվում է
տան դուռը և դուրս է գալիս Աննան դոր-

ծելով մի գուլբայ: Համասփիւռը վեր է կե-
նում տեղից, երբ որ տեսնում է, որ մայրը
գալիս է):

—

Նկրորդ երևայթ:

ՀԱՄԱՍՓԻՒՌ և ԱՆՆԱ:

Աննա: Ի՞նչ էիր երգում, աղջիկ:

Համասփիւռ: Ոչինչ, ինչ որ բե-
րանս գալիս էր:

Աննա: Բոլորը մին է, միայն թէ ու-
րախ լինիս: Կարդ պրծնո՞ւմ ես, թէ չէ:

Համասփիւռ: Ել շատ չէ մնացել:

Աննա: Լավ է, ապրիս — հիմայ լաւ
տեանջ դիր, թէ ինչ եմ ասում: Կարդ վեր
դիր դեռ գորա ժամանակը չէ:

Համասփիւռ. (վեր է դնում կա-
րը): Ի՞նչ էիր հրամայում, մայր:

Աննա: Թէպէտ այսօր առաւօտը մի
փոքր բարկացայ քեզ վրայ, բայց հիմայ ու-

դուժեմ ուրախացնել քեզ: — Հայրդ մի լաւ
տղայ է ճարել քեզ համար: (Տեսնելով որ
Համասփիւռը յանկարծ տխրեց և ձայն չէ
հանում): Հ'ը. ի՞նչ է:

Համասփիւռ: Մայր, եթէ ինձ
Սմբատին չէք տա, ես ուրիշ մարդ չեմ
ուզի:

Ա. ն. Ի՞նչ, էլի յիշեցիր այդ անպիտանի
անուներ, որ ուզում էր սպանել քո հօրը:

Համ. (հաստատ կերպով): Չէ, չէ, այդ
անկարելի է: Սմբատը ոչ մի ժամանակ չի
անի այդ բանը, թէպէտ ճշմարիտ է մի քանի
անգամ զանգատել է ինձ, որ հայրս առանց
պառճառի ատում է նորան:

Ա. ն. Ի հարկ է, որ նորան պէտք է ա-
տել: Նա ո՞վ է, որ ուզում է իմ փեսան
զառնալ: Գող, աւազակ և աւազակների
մշակ, որ ո՞վ դիտէ, այսօր կամ էգուց կը
զանուի մի փոսի մէջ սպանուած, կամ կը
տանին կախատալու: Քեզ եմ հարցնում, մի-
թէ դա կարող է բաղդաւորել քեզ:

Հ ա մ: Մայր, ես կարող եմ քեզ հետ
համարձակ խօսել, բայց հօրս ոչ ինչ չեմ
կարող ասել, որովհետև վախենում եմ նորանից: — Ես չեմ ուզում թաղցնել քեզանից իմ սիրտը և յոյս ունիմ, որ դու էլ
կը խղճաս ինձ: — Ես սիրում եմ Սմբատին և նա էլ նմանապէս սիրում է ինձ:
Միթէ այս բաւական չէ, որ կարողանանք
բաղդաւոր ապրել: Ձեզ ընդդէմ է նորա այժմեան պարապմունքը, բայց նա ուրախութեամբ ձեռը վեր կառնէ նորանից և կը
գառնայ աշխատաւոր հողագործ, միայն թէ
տայիք ինձ նորան:

Ս. ն. Ձէ, այդ անկարելի է: Դու պէտք է
դառնաս աստիճանաւորի, մեծ մարդու կին,
և մենք արդէն ճարել ենք քեզ համար մի
այդպիսի մարդ, (ժպտելով): Տեսնումես, թէ
ինչքան սիրում ենք քեզ և աշխատում ենք
քո բաղդաւորութեան համար:

Հ ա մ. Ես շատ շնորհակալ եմ, սիրելի մայր, բայց . . . :

Ա. ն. Բայց — ի՞նչ բայց, այստեղ ոչ ինչ բայց հարկաւոր չէ: Բանը վերջացած է: Գու՛ղե՛ռ երեխայ ես և չես հասկանում քո լաւն ու վատը: — Տես, բարկանալու տեղ՝ քո արած յիմարութիւնների համար, էլի այնքան բարի եմ, որ այսպէս բարեկամաբար եմ խօսում քեզ հետ, թէպէտ ես ինչպէս ծնող իրաւունք ունիմ հրամայելու:

Հ ա մ. Ես ամենեին չեմ ուրանում ձեր ծնողական իրաւունքը ինձ վրայ, բայց և մի և նոյն ժամանակ չեմ հասկանում, թէ ինչպէս կարելի է հրամանքով մինին ատել և միւսին սիրել, երբ որ ես նորան ամենեին չեմ ճանաչում:

Ա. ն. Հա՛ բարի և հնազանդ աղջիկը պիտի միշտ այն բանն անէ, ինչ որ ծնողքը հրամայում են նորան, որովհետեւ ծնողքը ոչ մի ժամանակ վատ բան չեն հրամայի ի-

բանց զաւակներին : Աւ ի՞նչ հարկաւ որ է
աղջկան ճանաչել իւր փեսացուն : Ա՞յ միթէ
ճանաչում էի քո հօրը, երբ որ ինձ տալիս
էին նորան : Ամէնեւին չէ, աչքով էլ չէի
տեսել : Բայց փառք Աստուծոյ, ահա շու-
տով երեսուն տարի կը լինի, ինչ որ մենք
մարդ ու կին ենք և ես չեմ կարող տեսի,
թէ բաղդաւոր չեմ նորա ձեռին : — Աւրեմն
շատ մի՛ խօսիր, այլ լսի՛ր թէ ինչ եմ ա-
սում : Մարտիրոս քեզը, մեր կառավարչի
թարգմանը խնդրել է հօրդ, որ քեզ նորան
տանք, և հայրդ էլ խօսք է տուել : (Համա-
սփիւռք շփոթվում է, ուզում է պատասխա-
նել, բայց չէ կարողանում) : Հա՛, ես հաս-
կանում եմ քո շփոթվելու պատճառը : Գու-
ի հարկէ երազումդ էլ չէիր սպասում այդ
բանը, որ նորա պէս մե՛ծ մարդը ուզէ քեզ :
Այսօր հայրդ գնաց նորա մօտ, որ իմանայ
թէ երբ կը կամենայ նշանը տալ :

Հ ա մ. Ա՛խ, մայր, այդ ի՞նչ ասացիր :

Ա. ն. Ի՞նչ է, ուրախ չե՞ս :

Հ ա մ. Մայրիկ խղճա՛ ինձ, ես չեմ կարող դառնալ նորա կիներ :

Ա. ն. Ի՞նչ, խելքդ ո՞ւր է, աղջի՛կ : Ես կարծում էի, թէ դու ուրախութենից վեր ու վեր կը թռչես ինչպէս դառը : — Նա մեծ մարդ է և քանի գնայ, այնքան աւելի կը մեծանայ : Գու լաւ կապրես, լաւ կուտես, կը խմես, լաւ կը մաշես և ամէնքն էլ կը պատուեն քեզ : Ել ուրիշ ի՞նչ ես ուզում .

Հ ա մ. Ի՞նչ գլխովս եմ տալիս նորա մեծամարդութիւնը և հարստութիւնը, երբ որ սիրով աղքատ կը լինիմ : Մի՞թէ մենք ստեղծուած ենք միայն ուտելու ու մաշելու համար :

Ա. ն. Նա քեզ սիրում է, և դու էլ կը սիրես նորան, երբ որ կը ճանաչես :

Հ ա մ. Չէ, չեմ ուզում : Թող ես միշտ այսպէս աղքատ մնամ : — Ես ուրիշ մարդ չեմ ուզի, բացի Սմբատից : Սպանեցէ՛ք ինձ,

մորթեցէք, ինչ ուզում էք արէք, բայց չեմ
դառնա նորա կինը:

Ա. ն. (մի կողմը): Համբերութիւնս հատաւ
(Համաստիւն ին բարկացած) Յիմար, անամօթ,
լիրք աղջիկ, ինչպէս համարձակվում ես այդ-
պէս պատասխաններ տալ քո ծնողին: Քո
գլխի արևը, շատ մեծ բան կարծեցիր քեզ,
որ ես այսպէս քաղցր խօսեցի հետդ: Գու-
ճով ես, ո՞ւմ շունն ես, որ հակառակ ես կե-
նում քո հօրն ու մօր կամքին, (Ճաղր անե-
լով): Ձեմ ուզի նորան: Քո կամքն է: Ար ստի-
պենք, յիմար աղջիկ, որովհետև դու կոյր
ես և չես տեսնում քո բաղդաւորութիւնը:
— Շատ քեզ նմանները ասել են, թէ կմեռնիմ
ու չեմ ուզի նորան, բայց չեն մեռել, ուզել
են և վերջը շնորհակալ են եղել: Քեզ հետ
էլ մի և նոյնը կը լինի:

Հ. ա. մ. Ձեր կամքն է, միայն ասում եմ,
որ վերջը կը զղջաք:

(Լսվում են երեկոյեան զանգակների ձայնը):

Ս. ն. (Երեսը խաչակնքելով) : Օրհնեալ է
Սասունած : — Բաւական է գլուխս մի՛ տանի՛ր :
Հիմայ դու գիտես արդէն իմ ու հօրդ կամ-
քը : Հայրդ որ գայ հարցնէ, թէ ի՞նչ ասաց
քեզ մայրդ, դու համբուրիր նորա ձեռը և
ասա՛, որ նորա կամքը սուրբ օրէնք է քեզ
համար : (Ելի լավում է զանգակների ձայնը,
որ տևում է մի քանի ժամանակ : Այդ մի-
ջոցին գալիս է Գրիգորը զիւղի քահանայի
տղան :

Ա. ն. Բարո՛վ, Գրիգոր, հա՛ն ի՞նչ կասե՛ս :
Ի՞նչպէս է տէրտէրակիներ :

Գրիգոր : Մայրս շատ հիւանդ է և ինձ
ուղարկեց քեզ մօտ, որ ասեմ, թէ ի՞նչ
այդպէս մոռացար նորան և էլ չես գալիս
մօտը :

Ա. ն. Ի՞նչ անեմ, որդի, պարսպ ժամա-
նակ չը գտայ, որ եկել էի : Բայց գնա՛, ասա՛,
որ այսօր իրիկնաժամից յետոյ կը գամ կը
տեսնեմ : (Գրիգորը գնում է) :

Համ. Մայր, թող ես էլ ժամ գնամ:
— Հողիս շատ խռոված է ու սիրտս անհան-
գիստ. կարելի է աղօթքը թեթևութիւն
տայ ինձ:

Ա. ն. (վեր է կենում տեղից): Չէ դու
տանը կը մնաս. կարող ես այստեղ էլ աղօթք
անել: Աստուած այստեղ էլ կը լսէ քեզ:—
Բայց տե՛ս չը համարձակուես հեռանալ տա-
նից, հայրդ շուտով գալու է: (գնում է).

Երկրորդ երևոյթ:

ՀԱՄԱՍՓԻԻՌ (մենակ):

Տէ՛ր Աստուած, ինչի՞ այսպէս սաստիկ
պատժում ես ինձ: Ա՛խ, այս ի՞նչ մի նոր
փորձանք է, որ հաւաքվում է գլխիս: Ի՞նչ
անեմ, որ ջուրն ընկնեմ, որ ազատուիմ
նորանից:— Հիմայ ես ի՞նչ ասեմ Սմբատին,
ի՞նչպէս յայտնեմ նորան այս բանը: Մինչև
հիմայ յոյս ունէիս, որ ծնողքս մի օր կը
կակողին և կը միացնեն մեզ, բայց ա՛խ, այդ

վերջին յոյսն էլ ոչնչացաւ այսօր :—

Ա'խ ի՞նչի այն մարդը, Մարտիրոս բէգը
ուզում է պսակուել ինձ վրայ : Եթէ նա իրաւ
այնպէս մեծ մարդ է, ինչպէս ասում է մայրս
ապա ես ի՞նչ արժանի եմ նորան, մի անկիւթ
գիւղացի աղջիկ. ի՞նչի քաղաքի մէջ չէ պըտ-
ում իւր համար կին — ի՞նչ տեսաւ իմ մէջ :
(Կարճ լռութենից յետոյ) : Ա՛հ, ես հասկա-
նում եմ նորա միտքը — ուրիշ կերպ անկա-
րելի է մեկնել այս բանը — նա տեսել է, որ
ես տգեղ չեմ, նա ուզում է ինձ չէ թէ իւր
համար կին, չէ, այդ անկարելի է, ես չեմ
հաւատում, այլ ինչպէս մի խաղալիկ, և
մի և նոյն ժամանակ կարելի է, որ ամեն օր
երեսովս տայ, թէ բարձրացրել է ինձ ցելսի
միջից : — Չէ, չէ, հեռու ինձանից, ես մեր-
ժում եմ քեզ, ես, գիւղացի աղջիկս :

Ե՛կ, ե՛կ, Սմբատ, իմ պահապան հրեշ-
տակ, ե՛կ, քո համասփիւռը փորձանքի մէջ
է, քո համասփիւռը տխուր է : Ա'խ, ի՞նչի

այստեղ չես դու, որ մխիթարես նորան :

Բայց ունայն ցանկութիւն, դու չես կարող դալ, իմ սիրական, սար ու ձորեր բաժանում են մեզ, բայց ամենից աւելի բաժանում են մեզ մարդիկ և մենք ստիպուած ենք թագցնել մեր սէրը ինչպէս մի ծանր յանցանք, թէ և նա նոյնպէս մաքուր ու անարատ է, ինչպէս ցերեկի լոյսը : — Ա'խ Սմբատ, մի բոպէ քեզ հետ, մի քաղցր խօսք քո բերանից ինչպէս թալիսման կը հեռացնէր սրտիս բոլոր ցաւերն ու վշտերը : — Բայց, չէ, չէ, չը դաս, իմ սիրական : — Լաւ համբաւներ չեն, որ դու լսելու ես ինձանից : (Լուռ թիւն) : Յանկարծ բեմի ետեւից լսվում է մի շվոց, Համասփիւռը վախենում ու դողում է բոլոր մարմնով) : Տէր Աստուած, այս ինչ շվոց էր : Ա'խ չը լինի՞ թէ նա գալիս է : (Շվոցը կրկնվում է, Համասփիւռը անհանգիստ նայում է դէս ու դէն) : Աստուած, ինչի լսեցիր իմ աղաչանքը : Ո'հ, սիրտս դողում

է, ի՞նչ անեմ, ի՞նչպէս ասեմ, ի՞նչպէս
յայտնեմ նորան : (Նա անհանգստութեամբ ման
է գալիս դէս ու դէն : Շվոցը կրկնւում է երրորդ
անգամ և յանկարծ կրկնում է Սմբատը : Նա կարճ
ժամանակ կանգնում է և զննելով նայում է իւր
չորս կողմը : Յետոյ վազում է Համասփիւռի վրայ
նորա գրկում են միմեանց) :

Չորրորդ կրկոյթ :

ՀԱՄԱՍՓԻՒՌ Լ ՍՄԲԱՏ :

Սմբատ : Համասփիւռ, քաղցր աննման
աղջիկ :

Համ. Ա'խ, Սմբատ :

Սմ. Ի՞նչ է, ի՞նչի այդպէս դողում ես :

Համ. Ոչ ինչ, մի փոքր վախեցայ :

Սմբ. Ի՞նչից վախեցար, հողիս : Հան-
դարտութիւր. ես այստեղ եմ :

Համ. Ա'խ, Սմբատ, ի՞նչպէս եկար այս-
տեղ. այդ մեծ համարձակութիւն է քո
կողմից : Եթէ ծնողքս տեսնէին քեզ :

Ս մ. Ես գիտէի, որ նորա տանը չեն :
Այսօր ճաշից յետոյ երկու կտոր դանաւուզ
տարայ Նախիջևան և այնտեղ տեսայ քո
հօրը : Երևա քշեցի ձիս այս կողմը և յոյս
աւնէի գտնել քեզ գետի ափը, բայց գիւղը
մանելով, հեռուից տեսայ, որ մայրդ մտաւ
եկեղեցին. ես էլ այդ բանից վստահացայ
զալ ձեր տուն, և ահա այստեղ եմ :

Հ ա մ. Բայց եթէ հիմայ յանկարծ հայրս
մայրս, կամ ուրիշ մայրդ դայ, յետոյ :

Ս մ բ. Մի վախենար, ոչ ոք չի դայ : Ես
չուտ կերթամ : Ես եկայ, որ տեսնեմ քեզ,
առնեմ սրտիս փափագը, տեսնեմ, որ դու
առաջվան պէս սիրում ես ինձ, և զնամ ու
երջանիկ լինիմ :

Հ ա մ. Ա'խ, ես չափիցը դուրս սիրում
եմ քեզ և հէնց այդ սէրն է, որ դառել է
իմ ցաւի պառճառը : — Ա'խ երանի թէ ա-
մենևին չէինք ճանաչել միմեանց :

Ս մ բ. (Զարմացած նայում է նորան)

վրայ)։ Ի՞նչ, Համասփիւռ, քեզանից եմ լըսում այդ խօսքը։— Իմ սէրը դառել է քո ցաւի պատճառը, երանի թէ ամենե ին չէինք ճանաչել միմեանց։ Ի՞նչ եմ լսում վայ ինձ։

Համ. Հա՛, երանի թէ չէինք ճանաչել միմեանց։ Ի՞նչ օգուտ անյոյս սիրելուց, ի՞նչ օգուտ, երբ որ մեր բոլոր քաղցր յոյսերը ոչնչանում են ինչպէս երազներ։

Սմբ. Համասփիւռ, Համասփիւռ, այդ ի՞նչպէս ես ընդունում ինձ այսօր։ Մի՞թէ նորա համար եկայ այստեղ, որ տեսնեմ քո տրտմու թիւնը։— Ես թռչում էի քեզ մօտ քաղցր յուսոյ թևերի վրայ, ուրախութեանից չէի զգում օտներիս տակ գետինը, կարծում էի թէ երկնքումն եմ, որովհետև քեզանից հեռու էլ զուրկ չէ իմ սիրտը բազդաւորութենից, ունենալով քո սէրը։ Եւ հիմա ի՞նչեր եմ լսում քեզանից։

Համ. Ա՛խ, Սմբատ (ծածկում է երեւոր ձեռներով)։

Ս մ բ. : (Անհանգիստ ձայնով) : Աղջիկ,
ի՞նչ է պատահել քեզ, ի՞նչի ես լաց լի-
նում :

Հ ա մ. : Ա՛խ, ապա ի՞նչ անեմ, ինչպէս
լաց չը լինիմ, երբ որ տեսնում եմ, որ մեր
ոտների տակ բաց է արել անդունդը իւր
սե բերանը, ինձ թշուառիս կուլ տալու
համար :

Ս մ բ. : Համասփիլու, մի՛ տանջիր ինձ,
մի՛ սպանիր, դու սրտումդ բան ունիս, ասա՛
համարձակ. ես ոչինչ բանից չեմ վախե-
նում, բացի քո սէրը կորցնելուց : Ասում ես
թէ բացուել է մեր ոտների տակ անդունդը .
բայց դու մի՛ վախենար, իմ հոգի : — Դը-
ժոխն էլ որ բացուի մեր ոտների տակ, քո Սմբար.
տը դուրս կը թռցնէ քեզ իւր սիրոյ թւերի
վրայ դէպի դրախտը . . : Միայն ասա՛ ինձ,
ի՞նչ բանից ես վախենում ե ես կը պաշտ-
պանեմ քեզ :

Հ ա մ. Ա՛խ, ինձ էլ ճար չը կայ : Ո՛հ,

լիւր, մի սարսափելի բան ասեմք քեզ: — Մեզ
բաժանուամեն, Սմբատ, ծնողքս չեն ուզում
տալ ինձ քեզ:

Սմբ.: Ս, յի վաղուց արդէն յայտնի է
ինձ: — Բայց ինչպէս կարող են նոքա քան-
դէլ սիրոյ կապը, որով կապուած են մեր
սրտերը: Չէ, չէ, մի՛ յուսահատուիր, իմ
աչքի լոյս, ձենք բաղդաւոր կը լինինք, հա-
ւատա՛ ինձ, որ բաղդաւոր կը լինինք: — Ես
գիտեմ, թէ ինչի համար ատում է ինձ քո
հայրը, բայց ինչ չեմ անի քեզ ստանալու
համար, ինչ դժուարութիւններ չեմ յաղ-
թի: Քո սէրը կը տայ ինձ ոյժ և ուրու-
թիւն: Ես կը թողնեմ իմ պարապմունքը,
որի պատճառով ատում է ինձ քո հայրը,
կը թողնեմ այս անհաստատ կեանքը, և
բարի ու խաղաղ աշխատանքով, ճակատիս
քրտինքով կը ձարեմ իմ ապրուստը և կը
պահեմ քեզ: — Մի՞թէ այն ժամանակն էլ
չեն տա քեզ ինձ:

Հ ա մ. : Ա'խ, սիրական, եթէ նա մինչև
այժմ միայն մի պատճառ ունէր բաժանե-
լու մեզ, բայց հիմայ . . . :

Ս մ բ. : (Ախ ականկալու թեամբ) : Հիմայ . . . :

Հ ա մ. : Հիմայ նա ուրիշ զօրաւոր պատ-
ճառ ունի : Նա մարդ է ճարել ինձ համար :

Ս մ բ. : Ի՞նչ :

Հ ա մ. : Հիմայ ասաց ինձ մայրս այդ
բանը :

Ս մ բ. (բարկացած) : Այդ ո՞վ է, որ ձան-
ճրացել է իւր կեանքից և համարձակում
է խել ինձանից իմ ծաղիկը : Ասա՛ ո՞վ է
նա, և էգուց էլ չի լինի :

Հ ա մ. : Սմբատ, աչքերիցդ կրակ է թա-
փում : Չէ՞ այդ բանը մի՛ ասեր, չէ՞, սիրա-
կան : Եթէ այդ սարսափելի գնով պիտի
ստանամ քեզ, լաւ է հրաժարուել ինձ
իմ սիրուց :

Ս մ բ. (Դարձնում է երեսը սառնու-
թեամբ) : Մի՞թէ այդպէս հեշտ է քեզ հա-

մար այդ բանը : Ափսոս, որ չը գիտէի :

Համ. : Չէ, մի՛ դարձնիր երեսդ ինձա-
նից, մի՛ բարկանար, այստեղ նայի՛ր :— Բայց
երդում կեր, Սմբատ, որ ոչ ինչ վատ բան
չես անի :

Սմբ. : Երդվում եմ իմ սիրով :— Բայց
ասա՛, ո՞վ է քո փեսացուն :

Համ. : Դու լաւ ես ճանաչում նորան .
Մարտիրոս բէգը, կառավարչի թարգմանը :

Սմբ. (սառնութեամբ) : Հա՛, այդ ու-
րիշ բան է : Իմ ու նորա մէջ մեծ զանա-
զանութիւն կայ. դու ինքդ կը տեսնէիր այդ
բանը :— Նա մեծ մարդ է. իսկ ես մի աղ-
քատ գիւղացի տղայ : (Տեսնելով, որ Համա-
սիիւռը լռում է) : Յետոյ, Համասիիւռ, յե-
տոյ դու ինձ ոչ ինչ չես ասում :

Համ. (ծանր հառաչանքով : Ա՛խ Սըմ-
բատ, ի՞նչ ասեմ :

Սմբ. (զարմացած) : Մի՞թէ, իրաւ ոչ
ինչ չունիս ասելու : Զարմանում եմ : (Մտա-

Տելով ման է գալիս դէս ու դէն, յետոյ
կանգնում է Համասփիւռի առաջ և ասում
է սաստիկ վրդովված ձայնով) : Համասփիւռ,
Համաձայն ես դառնալ նորա կիներ :

Հ ա մ. (վիրաւորված) : Սմբատ, այդ ի՛նչ
ես հարցնում :

Ս մ բ. (ինչպէս վերևը) : Ես քեզ հար-
ցնում եմ համաձայն ես ուրանալ ինձ և
դառնալ նորա կիներ :

Հ ա մ. : Սմբատ, Սմբատ, մի՞թէ չես ճա-
նաչում ինձ, որ այդ հարցմունքը տալիս ես
ինձ : Գու լաւ գիտես, որ ես առանց քեզ
չեմ կարող ապրել :

Ս մ բ. : Ուրեմն չե՞ս ուրանա ինձ, Հա-
մասփիւռ, չե՞ս ուզի նորան :

Հ ա մ. (փաթաթուելով նորա վզին) :
Չէ, չէ, իմ սիրական : Ինքը Աստուած է տես-
նում որ իմ սրտի մէջ դրած է չէ : —
Ո՛հ, աւելի շուտ կը գլորուի իւր տեղից այն
ահագին Մասիսը քան թէ կը խախտուի իմ

Հաւատարմութիւնը: Ես քոնն եմ մինչև
վերջին շունչս. առանց քեզ մի օր էլ չեմ
ապրի:

Ս մ բ. (ողևորված): Համասփիւռ, իմ
հրեշտակ, երկնային աղջիկ, ի՞նչպէս երջա-
նիկ, ի՞նչպէս հարուստ եմ, ունենալով քո
սիրտը: Հաւատա՛ ինձ, որ ես չեմ նախան-
ձում նոյն իսկ թագաւորին: (Զմայլելով նո-
րա գեղեցկութեամբ): Ո՛հ ինչպէս գեղեցիկ
ես դու, իմ նազելի, աւելի գեղեցիկ, քան
թէ առաջին կիները դրախտի մէջ — մեռնեմ
քո ստեղծողին: — Գիտե՞ս, Համասփիւռ թէ
ինչ եմ զգում ես այս րոպէին: Ես զգում
եմ, որ ինձանից բազդաւոր մարդ չը կայ աշ-
խարհիս երեսին:

Հ ա մ: Բայց ասա՛, ի՞նչ անեմ, ես գի-
տեմ, որ ծնողքս կը ստիպեն ինձ:

Ս մ բ.: Հա՛, ես այդ գիտեմ, և մա-
նաւանդ լսելով այդ համբաւը, ուզում եմ
այսօր իսկ վերջացնել բանը:

Հ ա մ. : Ի՞նչպէս կը վերջացնես, Սմբատ :
Ս մ բ. : Ես կը մնամ այստեղ, մինչև
հայրդ գայ : Այսօր վերջին փորձը կը փոր-
ձեմ համոզելու նորան, որ նա համաձայնի
տալ քեզ ինձ :

Հ ա մ. : Վ՛ո՛ւյ, չէ՛, ի՞նչ ես ասում : Գու-
շես կարող մնալ այստեղ : Նա կը սպանէ
ինձ, եթէ մեզ միասին տեսնէ : Չէ՛, Սմբատ,
նա չի համաձայնի այդ բռնին, այլ աւելի
կը բարկանայ մեզ վրայ : Եթէ մի ուրիշ
հնարք գիտես ասան, բայց թա անօգուտ է :

Ս մ բ. : (Մտածելով և անշարժ նայում
է մի կողմը, յետոյ յանկարծ բռնում է
Համասփիռի ձեռք) : Համասփի՛ւռ, սիր՞ում ես
ինձ :

Հ ա մ. : Հա՛ :

Ս մ բ. : Շա՛տ :

Հ ա մ. : Ա՛յ ելի՛ : Քան թէ ինձ :

Ս մ բ. : Կը կատարե՞ս, եթէ մի բան խըն-
գրեմ :

Հ ա մ. : Կը կատարեմ, եթէ կարող եմ :

Ս մ բ. : Կարող ես, եթէ միայն սիրում
ես ինձ :

Հ ա մ. : Ասա :

Ս մ բ. : Գու ճշմարիտ ես ասում, Հա-
մաստի՛ւն, մենք չենք կարող յաւասլ քո
ճնողաց վրայ : Ես գիտեմ մի հնարք, որով
կարով ենք յաղթել նոցա կամակորուժեա-
նը, և որ մեզ յաւիտեան կը միացնէ :

Հ ա մ. : (Ղի անկալութեամբ) : Ասա
տեսնեմ :

Ս մ բ. , Ես կը փախցնեմ քեզ, եթէ կը
գաս :

Հ ա մ. (վախեցած) : Ա՛նչ, չէ, չէ, այդ
անկարելի է :

Ս մ բ. : Համաստի՛ւն, ուրիշ հնարք չը
կայ, կը փախչես ինձ հետ :

Հ ա մ. : Չէ, Սմբատ, ես չեմ կարող այդ
բանը անել : Յետոյ իմ ճնողքը, անունս, պա-
տի՛ւն : Չէ, ես սարսափում եմ մտածել այդ

բանի վրայ :

Ս մ բ . : Համասփիւռ , այդ մի հատ և վերջին հնարքն է , ասում եմ քեզ — այդ փորձն է ասի , որին պիտի դիմանայ քո սէրը դէպի ինձ : Աւերջին անդամն եմ հարցնում , կը փախչե՞ս ինձ հետ :

Հ ա մ . : (Նրեում է , որ սաստիկ պատերազմ է կատարվում նորա մէջ : Նա սաստիկ շփոթված է և լռում է) :

Ս մ բ . : Պատասխան տո՛ւր :

Հ ա մ . (հաստատ ձայնով) : Ես չեմ կարող փախչել քեզ հետ , ես չեմ կարող բարձել ինձ ու քեզ վրայ իմ հօրն ու մօր անէծքը : (Ծածկում է երեսը ձեռներով) :

Ս մ բ . (սաստիկ բարկացած) : Լա՛ւ , հերիք է . հիմայ բոլորը գիտեմ : Ես շատ լաւ հասկանում եմ քո միտքը . ինձ չես կարող խաբել : Մեր բանը վերջացած է : — Ես չեմ կարող ստանալ քեզ , այդ ճշմարիտ է . բայց վկայ է Աստուած , որ նա էլ չի ստանայ :

(Յոյց տալով դաշնակը): Սա ինձ կօգնէ: —

Ես կը սպանեմ նորան էլ ու ինձ էլ: (զնուժէ):

Հ ա մ. (վազուժ է նորա ետեւից և բռն-
նուժ է նորան): Կաց, Սմբատ, կաց, լսի՛ր ինձ:

Ս մ բ. (խլվում է նորա ձեռից): Թող,
դու ինձ չես սիրում: (Ուզում է գնալ):

Հ ա մ. (յուսահատված): Լսի՛ր, թէ Աստ-
ուած կը սիրես. ես կը կատարեմ քո կամքը:

Ս մ բ.: (Յետ դալով): Կը փախչես ինձ
հետ:

Հ ա մ.: Հա՛ հա՛: Ախ Աստուած ինչ ա-
նեմ, երկու կրակի մէջ այրուում եմ:

Ս մ բ.: Ենորհակալ եմ, Համապիկու, հիմայ հաւատում եմ, որ սիրում ես ինձ:

Էզուց առաւօտը վաղ կանց կենամ՝ Երասխը
և կերթամ Գարաշամ: Այն տեղի քահա-

նան իմ լաւ բարեկամն է: Ես կը խնդրեմ
նորան ամեն բան պատրաստելու մեզ պա-

կելու համար: Կիրակի կէս օրից յետոյ կը
սպանեմ քեզ Երասխի ափը, դու կը նրա-

տես ինձ հետ ձիու վրայ և մենք անց կը
կենանք գետը: Երբ որ արդէն պատկուած կը
լինենք, այն ժամանակ ահամայ ստիպուած
կըլինենք քո ծնողքը տալ մեզ իրանց օրհ-
նութիւնը: Համաձայն ես, Համասփիւռ:

Համ: : Համաձայն եմ: Բայց հիմայ
գնա՛, Սմբատ, ջըլինի թէ հայրս գայ:

Սմբ.: Քնու՛մ եմ: Մնաս բարով:

Համ.: Քնաս բարով: (Գրկու՛մ են մի-
մեանց և բաւտիան ժամանակ մնում են այդ
դրութեան մէջ: Յանկարծ մտնում է մահ-
տեսի խաչատուրը):

Հինգերորդ երևոյթ:

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՀՏԵՍԻ ԽԱՉԱՏՈՒՐ

(Համասփիւռը և Սմբատը սկզբումը չեն նը-
կատում նորան):

Խաչ.: Տէ՛ր Աստուած, այս ի՞նչ եմ տես-
նում: (Սաստիկ ձայնով և վազելով նոցա
վրայ): Համասփիւռ, Սմբատ:

Համ. : Ա՛խ հայրս) (Նրկուսը միասին
Սմբ. : վայ) վախեցած) :

Խաչ. : Այս ի՞նչ է, անպիտան, անիծած
աղջիկ, այս ի՞նչ խայտառակութիւն է : (Ա-
ւելի ու աւելի տաքանալով) : Փճանալու, ա-
նամօթ, լիրբ աղջիկ : (Վրայ քաշուելով) :
Խեղդեմ, — Ո՛հ կատաղումեմ :

Համ. : Ա՛խ հայր :

Խաչ. : Չայնդ կտրիր, թէ չէ գլուխդ կը
ջարդեմ, օձ : Ի՞նչպէս կարողանումէ գետինը
կրել քեզ իւր վրայ. ինչի՞ չէ կուլ տալիս
քեզ դժոխքը :

Սմբ. : Հանդարտուիր, մահտեսի, ինչի՞
այդպէս անիծումես քո աղջկան :

Խաչ. : Եւ դու, փուճ կենդանի, ինչ ես
ուզում այստեղ : Աւազակ, խաբեբայ, դու,
դու միայն պղտորեցիր իմ աղջկայ միտքը :
Քեզ եմ ասում, սատանայ, ի՞նչ ես շինում
այստեղ, իմ տունը ինչի՞ ես քանդում :
(Դառնալով դէպի Համասփիւռը), Աստուծոյ

բերանով նզոված աղջիկ, այս ի՞նչ արեցիր
ինձ: — Ո՛հ ես գետնի հետ հաւասարուած
եմ: — Անիծած լինի այն ժամը, երբ դու
տեսար Աստուծոյ լոյսը, անիծած լինի այն
ժամը, երբ դու ինձ հայր անուանեցիր, ա-
նիծած լինիս դու, հազար անգամ անիծած
որ իմ անունը խայտառակեցիր: (Սաստիկ
բարկացած վազում է դէս ու դէն): Ո՛հ Աս-
տուած, դու տո՛ւր ինձ համբերութիւն:

(Այդ բոլոր միջոցում Համասփիւռը կանգ-
նած է մի ծառի մօտ գլուխը կորացրած):

Սմբ.: Մահտեսի, հանդարտուի՛ր, դու ի
զուր ես անիծում քո աղջկան. նա հրեշ-
տակ է:

Խաչ. Կորի՛ր այստեղից, փուճ կենդանի
որ աչքս չբռնենէ քեզ: — Ո՛հ, ունենայի
ձեռիս մի սուր, որ մի հարուածով թրու-
ցընէի երկուսիդ գլխները և ձեր միսը կե-
րակուր տայի շներին ու արագիլներին:

Սմբ.: Պարոն մահտեսի, լսիր ինձ խնդ-

բուժեմ քեզ: Ես չեմ խայտառակում քո
անուներ, ես չեմ եկել քանդելու քո տունը.
դիտէ Աստուած, թէ ինչպէս ցանկանումեմ
նորա հաստատութիւնը, միայն լսիր ինձ:

Խ ա չ .: Զէ', չեմ ուզում, կորիւր այս-
տեղից: Ես ասումեմ քեզ, ասումեմ, ինչ-
պէս այն անիծած օձին, որ խաբեց Նւային: —
Գնա՛, ասումեմ քեզ, մի կատաղայնիր ինձ:

Ս մ բ .: (Համոզողական ձայնով): Մահ-
տեսի, լսի՛ր, աղաչումեմ քեզ, բարկութե-
նից չըզիտես, թէ ինչ ես ասում: Ո՛չ ես, ոչ
նա մեղաւոր չենք այս բանում, այլ միայն
քո կամակորութիւնը ստիպեց մեզ գնալ
պատժի դէմ. բայց էլի մեք արդար ենք ինչ-
պէս քո, նմանապէս Աստուծոյ առաջ:

Խ ա չ .: (Մօտ է գնում սեխմած բռնեցով):
Ա՛յ տղայ, դու փորձումես իմ համբերու-
թիւնը, դու ծաղր ես անում ինձ վրայ. ու-
զումես դուրս շարտեմ քեզ:

Ս մ բ : Մահտեսի, հոգուդ մատաղ, տե՛ր

ինձ քո աղջիկը: Ես սիրում եմ նորան, ցնորում եմ նորանով. ես չեմ կարող ձեռք վեր առնել նորանից, քանի որ կենդանի եմ: Բաղդաւորի՛ր մեզ, օրհնի՛ր մեր սէրը: (Մեկնում է նորա առաջ):

Խ ա չ .: Ի՞նչ, անպիտան, օրհնեմ ձեր սէրը: Ես անիծում եմ նորան, անիծում եմ ամենասարսափելի անէծքով, որ մի ժամանակ դուրս է եկել մի մահկանացուի բերանից: Վեր կաց, կորի՛ր, ես չեմ տայ քեզ նորան:

Հ ա մ .: Ա՛խ, հայր, խղճայ ինձ, մի կորցրնի՛ր քո աղջկան: Ես էլ աւելի չեմ կարող լուռ կենալ — ես սիրում եմ սորան: Մեկարելի է, դու չես կամենայ իմ տարաբաղդու թիւնը, դու չես կամենայ մատնել ինձ յուսահատութեան ձեռք:

Խ ա չ .: Չայնդ կարի՛ր, անամօթ աղջիկ: Գու իմ օրը խայտառակեցի՛ր, դու պատուեցի՛ր քո հօր սիրտը, և այսուհետեւ էլ տեղ չըկայ քեզ համար նորա մէջ: — Ի՞նչ:

Ձեզ պէս լակոտները պիտի կապեն իմ ձեռ-
ները ու խափանեն իմ խորհուրդները:

Ս մբ.: Մահտեսի, հայր, տուր ինձ քո
աղջիկը: Մի նայիր իմ չքաւորութեանը: Շատ
անգամ պալատի մէջ բնակողը պատճառ ու-
նի նախանձելու մի բաղդաւոր խրճիթի մէջ
բնակողին: Ի հարկ է, ես չունիմ — ոչ ինչ երկ-
րաւոր գանձեր, բայց ունիմ մի սիրտ, որից
միշտ զուրկ են հարուստները և մեծամար-
դիկ — մի սիրտ եմ ասում, որ լի է ամենա-
քնքոյշ սիրով: Այդ սիրտը կրտամ բնակու-
թիւն քո Համափիւռին. նա բաղդաւոր կը
լինի ու կօրհնէ քեզ: Տո՛ւր ինձ նորան:

Խ ա չ .: ՏՕ, կորիր ասումեմ քեզ է՞, գը-
լուխս մի՛ տանիր, ես չեմ հասկանում քո
յիմար առակները. գնա՛ ուրիշին պատմիր —
եւ չեմ տայ քեզ իմ աղջիկը:

Ս մբ.: (Ջեր կենալով): Մահտեսի, այդ
է քո վերջին կտրական խօսքը:

Խ ա չ .: Հա՛, հա՛, հա՛, իմացիր: Դէհ հի-

մայ գնահ, և այսու հետև էլ չըկոխես իմ տան
շէմքը:

Սմբ.: Մահտեսի, մի լինիր այդպէս ան-
գու թ, մի^օթէ քար է քո սիրտը: Ես չեմ կա-
րող ապրել առանց Համասփիւռին: (Հա-
նումէ դաշնակը): Ես կըսպանեմ իմ գլուխը
եթէ չես տայ ինձ քո աղջիկը:

Համ.: (Սաստիկ վախեցած առաջ է վա-
զում և բռնում Սմբատի կուռը): Վայ, Սմ-
բատ, այդ ինչ ես անում: Առաջ ինձ, յե-
տոյ քեզ:

Խաչ.: (Ձգումէ Համասփիւռին մի կող-
մը, այնպէս, որ նա վեր է ընկնում և ուշա-
թափվումէ): Գէնը կորի'ր: (Սմբատին): Գէ՛հ
էլ ինչ ես սպասում: Շուտ արահ, ցոյց տուր
քո քաջութիւնը, սպանիր գլուխդ: Աւելի
լաւ է, մի շուն կըսպասի աշխարհին: —
Թուրքին կըտամ, քեզ չէ, հիմայ իմացար,
կորի'ր:

Սմբ.: (Գնումէ դաշնակը իւր տեղը):

Անթառ, քարասիրտ մարդ. բայց խմացիւր,
որ դու երկուսիս էլ կրկորցնես: (Շտապով
դուրս է վազում):

Վեցերորդ երևոյթ:

ՀԱՄԱՍՓԻՒՌ Ե Մ. ԽԱՉԱՏՈՒՐ:

Խ ա չ. : Գնա՛, կորիւր, ես չեմ վախենում
քո մարդարէութենից: Ես իմ ուզածը կա-
նեմ: Աամեցայ և կը կատարեմ: Ասացի,
չեմ տայ իմ աղջիկը և չեմ տայ, ասացի,
որ նա մեծ մարդու կին կը լինի, և կը լինի:
(նայում է Համասփիւռի վրայ): Բայց այս
ինչ է: Ինչպէս դեղնել է այս աղջիկը, կար-
ծես թէ մեռնում է: Բայց չէ, բանը մինչև
այդտեղ չի հասնի, ես իսկոյն կը կենդանա-
ցնեմ քեզ: (Բերում է առուից մի ամանով
ջուր և ցանում է Համասփիւռի երեսին):
Ահա՛, որ ասացի, աչքերը բաց է անում:

Հ ա մ. : (Աամաց կամաց սթափում է

ուշաթափութենից, վեր է կենում և անհանգիստ նայում է իւր չորս կողմը) : Ո՞ւր է ինձ թողեց ու գնաց :

Խ ա չ. : Ո՞ւմն ես ուզում, աղջի, խելքդ գլուխդ հաւաքիր :

Հ ա մ. : Ա՛խ, հայր, ո՞ւր է Սմբատը :

Խ ա չ. : Աստուծոյ կրակը քո Սմբատի գլխին : Խելագարուել ես, ի՞նչ է : Մի՛ կատաղեցնիր ինձ : Մոռացիր նորան. այսուհետեւ էլ չես տեսնի :

Հ ա մ. : Ա՛խ, հայր, դու անգութ ես :

Խ ա չ. : Ի հարկ է այդպէս կասես, որ չեմ կատարում քո կամքը, որ չեմ տալիս քեզ այն աւազակին, որ գիշեր ու ցերեկ քունս կտրելով աշխատում եմ քո բազմաւորութեան համար : Ո՛հ, ես վաղուց կարդում էի քո ճակատին քո յանցանքը, վաղուց վախենում էի տեսնել այս զզուելի տեսարանը. բայց դուք ինձանից խորամանկ էիք և առաջս կտրեցիք : — Բայց ինձ հա-

մար բոլորը մին է. ես իմ ուզածը կանեմ:
Արդէն վճռած է: Դու կը դառնաս Մարտիրոս
բէգի կինը և էգուց կը ստանաս նշանը:
(Համասփիւռը ուզում է գնալ): Կայց, ո՞ւր
ես գնում: Մայրդ ո՞ւր է կորել:

Հ ա մ: Նա ժամ գնաց և այնտեղից պիտի
գնար տէրտէրակնոջ մօտ:

Խ ա չ: Ա՛յ խռով կենայ նորան ժամն
էլ, պատարագն էլ ու տէրտէրն էլ, որ քեզ
մենակ չէր թողել և այս խայտառակութիւնը
չէր բերել իմ գլխին: — Գնա՛, իրիկնահացը
պատրաստի՛ր: (Համասփիւռը դուրս է
գնում):

Եօթներորդ երևոյթ:

ԽԱԶԱՏՈՒՐ, փոքրից յետոյ ԱՆՆԱ:

Խ ա չ: Փոքր մնաց, որ բանը վատ գընար:
Բայց Ատուած ողորմած է: Ես չեմ
կարծում, որ նա այսուհետև էլի գայ այս
տեղ: — Բայց հիմայ պիտի շտապիմ: Էգուց

կը նշնեմ և կաշխատեմ մի երկու օրից յե-
տոյ պսակել: Յետոյ տեսնեմ, թէ ինչ կանէ:
(Գալիս է Աննան): Ո՞ւր ես, ո՞ւր, յիմար պա-
ռաւ, ո՞ւր ես կորել:

Ա.ն.: Ի՞նչ է, ի՞նչ ես բարկացել:

Խ ա չ.: Աստուած բարկանայ քո գլխին,
թէ չէ իմ բարկանայը ոչ ինչ չէ օգնում:
— Կինը ու սատանան մի և նոյն են, սղա-
մարդը ի՞նչ կարող է անել նորա դէմ: —
Մի ասա՛ տեսնեմ, ի՞նչ հարկաւոր բան ու-
նիս որ աղջկադ մենակ ես թողնում:

Ա.ն.: Ի՞նչ է, որ մենակ եմ թողնում,
ո՞վ կերաւ նորան: Տէրտէրակինը հիւանդ
է, գնացել էի տեսնելու: Այստեղ ի՞նչ կայ
բարկանայու:

Խ ա չ.: Ոչ ինչ, ի՞նչ պիտի լինի: Գու
ուրիշ տեղ ես գնում տեսութիւն, ուրիշ-
ներն էլ գալիս են քո աղջկայ մօտ տեսու-
թիւն. Ի հարկէ քեզ համար այդ մի և
նոյն է:

Ա ն . : Մահտեսի , չը գիտեմ ծաղր ես
անում , թէ ինչ է , բայց դէմքիցդ երևում
է , որ բարկացած ես : Թէ ուզում ես , որ բան
հասկանամ , պարզ ասա :

Խ ա չ . : Աղջեկդ ծածուկ սիրականներ է
ընդունում , երբ որ մենակ է : Հիմայ հաս-
կացար :

Ա ն . : Վո՛յ , ի՞նչ ես ասում , մահտեսի :

Խ ա չ . : Չե՞ս հաւատում : Ես իմ աչքով
տեսած բանն եմ ասում քեզ : Այդ յիմար
անհողութիւնն է , որ քանդում է քո սուներ
է : Ես հէնց այստեղ վրայ հասայ Համա-
սփիւռ ին ու Սմբատին միմեանց գրկած :

Ա ն . : Վայ իմ գլխին : Երանի ոտս կո-
տրուել էր , տանից դուրս չէի գնացել :

Խ ա չ . : Հա՛ , երանի թէ այդպէս էր ե-
ղել . բայց ո՞ւր է , Աստուած չէ լսում :

Ա ն . : Հերիք է , թէ Աստուած կը սիրես ,
մի՛ բարկանար : Մարգարէ չեմ , որ իմանայի

Թէ կը պատահի այդ բանը: Ես ի՞նչ մեղաւոր եմ:

Խ ա չ: Ի՞նչ ես յիմար յիմար գուրս տալիս, ա՛ կին: Ապա ո՞վ է մեղաւորը, ես, ինչ է: Այսօր առաւօտը չասացի քեզ, Թէ հարկաւոր է զգոյշ կենալ Սմբատից, որ մի փորձանք չը բերէ մեր գլխին: Այս հերիք չէր: Գիտե՞ս, յիմար կին, որ քո անզգուշութիւնը կարող էր բոլորովին քար ու քանդ անել մեր բանը:

Ա ն: Զէ Աստուած ողորմած է: Հիմայ ասա՛ տեսնեմ, ի՞նչ շինեցիր Նախիջևանում:

Խ ա չ: Էղուց իրիկնապահը կը բերեն նշանը:

Ա ն: Փառք քեզ Աստուած:

Խ ա չ: Մարտիրոս բէգը այդպէս է կամենում, բայց այդ մասին յետոյ կը խօսենք: Ես հիմայ գնում եմ, կառավարիչը մի քանի բան հրամայեց, պիտի կատարեմ: Գնա՛, իրիկնահացը պատրաստիր. ես շատ

չեմ ու շանայ : (Աննան մտնում է տուն, իսկ
Խաչատուրը դուրս է գնում) :

(Վարազդուրը դաժ է ընկնում) :

ՆՐՐԱՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ:

(Առաջին գործողութեան սենեակը Մ. Խաչատուրի տանը մի փոքր զարդարած: Իրիկնապահ է):

Առաջին երևոյթ:

Մ. ԽԱԶԱՏՈՒՐ Լ ԱՆՆԱ:

Խ ա չ. Ի՞նչ պիտի անենք, ա՛ կին, որ Համասփիւռը այսպէս կամակորովում է: Շուտով նշանը կը բերեն և կը գայ Մարտիրոս բէգը: Եթէ նա չի ընդունի նորա նշանը, ո՛հ, ես կը կատաղիմ այն ժամանակ: Ես կը սպանեմ նորան, եթէ այդ խայտառակութիւնը կը բերէ իմ գլխին:

Ա. ն.: Մի՛ բարկանար, մահտեւի՛, նա չի անի այդ բանը: Նորա պէս իր ասածի հետ հարկաւոր է ուրիշ կերպ վարուել: Խօսքով

բանը չի շինուի. այստեղ հարկաւոր է խորամանկութիւն :

Խ ա չ. կինը աւելի խորամանկ է, քան թէ սատանան, տղամարդը ի՞նչ կարող է անել նորա դէմ :

Ա ն. Ասենք այդպէս է : Բայց մի կին կարող է միւսից խորամանկ լինել : Ուրեմն կնոջ դէմ էլ հարկաւոր է կին :

Խ ա չ. Ի՞նչ ես յիմար յիմար դուրս տալիս, ա՛յ կին, բան ես ասում, բան ասա :

Ա ն. Միամիտ կաց, մահտեսի, Համաօփիւռը էլ պատճառ չունի չուղելու Մարտիրոս բէգին, որովհետեւ ես հեռացրել եմ նորանից այդ պատճառը :

Խ ա չ. Ի՞նչպէս թէ հեռացրել ես պատճառը. չեմ հասկանում :

Ա ն. Բաւական է երկու խօսք, թէ իմա. նաս բանի զօրութիւնը. (Ժպտելով) : Ես սպանել եմ Միքատին :

Խ ա չ. (զարմացած) : Ի՞նչ ես ասում.

Ա ն. Եւտտառուել ես, ի՞նչ է :

Ա. ն. (ինչպէս վերևը) : Ամենևին չէ :
Հայ, ես սպանել եմ Սմբատին և շուտով
Համասփիւռը կիմանայ այդ բանը :

Խ ա չ. : (Ուսերը վեր քաշելով) : Գլուխս
մեռնի, թէ մի բան հասկանում լինիմ քո
ասածից : Սատանան ինքը դժուար թէ
հասկանայ քեզ :

Ա. ն. Հանդարտուիր, մահտեսի, ես իս-
կոյն կը հասկացնեմ քեզ :

(Այդ միջոցին բացվում է ձախ կողմի դուռը
և մի կին անյտեղից խօսում է Աննայի հետ) :

Կ ի ն ը : Հերիք է, Աննա, քանի խօ-
սիս : Արի տեսնե՞ք ինչ ենք անում. ջուրը
եփ է գալիս :

Ա. ն. Տէս, թէ աղը տեղն է, բրինձը
մէջն ածա՛, ես էլ շուտով կը գամ : (Կինը
դնում է) :

Խ. Շուտ ասա՛ տեսնեմ, ի՞նչ էիր ասում
ժամանակը անց է կենում. ես պիտի գնամ
մարիդկ ուղարկեմ փեսայի առաջ :

Ա. ն. Ա. հ. ա', լսիր : Ես այսօր գնացի մեր
դրացի Գրիգորի կնոջ մօտ : Նորա մօտ էր
և նորա աղջիկ Շուշանը, Համասփիւռի սրտա-
կից բարեկամը : Ես պատմեցի Գրիգորի կնո-
ջը ինչպէս նոր լուր, որ այսօր առաւօտը
վաղ դադախները սպանել են Ջուղայեցի
Սմբատին ապրանք անցկացնելիս : Շուտով
կը գայ Շուշանը և գիտեմ, որ անպատճառ
կը պատմէ այդ բանը Համասփիւռին : Մեզ
էլ այդ է հարկաւոր : Երբ որ նա կիմանայ
Սմբատի մահը, այն ժամանակ ճարը կտրած
կուզէ Մարտիրոս բէգին : — Ի՞նչպէս է, մահ-
տեսի, հաւանում ես իմ միտքը :

Խ ա չ. Պառաւ, դու շատ խորամանկ ես
եղել. այդ յոյսը չունէի քեզանից : — Բայց
ես էլի կասկածուեմ եմ, որ յաջողի քո խո-
րամանկութիւնը : Կարծուեմ ես, թէ Համա-
սփիւռը իսկոյն կը հաւատայ Շուշանի խօսքին :

Ա. ն. Ի հարկէ կը հաւատայ : Համա-
սփիւռը շատ սիրում է Շուշանին և գիտէ,
որ նա չի խարի նորան :

Խ ա չ. Աստուած տայ, որ այդպէս լինի :
— Բայց բոլորը մին է ինձ համար : Ես կա-
մենում եմ, և նա պիտի դառնայ Մարտիրոս
բէգի կինը : Ես գնում եմ, Տէօ, Աննա՛, ամեն
բան պատրաստ լինի : (Նոքա դուրս են գը-
նում բակը) :

Եկրորդ երևոյթ :

ՀԱՄԱՍՓԻՒՌ (դուրս է գալի ձախ կողմից
նոր շորերով) :

Ասում են շուտով՝ գալու է իմ փե-
սացուն : Մի և նոյն է, թէ ասէին շուտով
գալու է քո հոգեհանը : — Ո՛հ Աստուած,
ինչ բանով բարկացրի քեզ, որ այս պա-
տիժը տալիս ես ինձ : — Բայց ի՞նչ եմ ա-
սում : Մեղա՛, իմ Արարիչ, դու չես, որ այս
տալիս ես ինձ. քո մատը խառը չէ այս բանի
մէջ : Եթէ դու ձգեցիր սրտիս մէջ այս սէրը,

ապա չես կամենայ, որ ես, Սմբատին թողած, ընծայեմ իմ սիրտը ուրիշին, որի համար նա ամենեին չէ զարկում: Չէ, Աստուած, դու չես պահանջում ինձանից այս բանը, այլ իմ ծնողքը: — Ա՛հ, որքան տարաբաղդ զաւակ եմ ես, որ շնորհակալ լինելու տեղ, ստիպուած եմ գանգատ անել նոցանից: (Նա տխուր ծայում է ձեռները կուրծքի վրայ և մտածելով ման է գալիս յետ ու առաջ):

Բայց ճար չը կայ. ես պիտի կատարեմ նոցա կամքը. այսօր էլ պիտի համբերեմ: Այսօր: — Բայց ա՛խ, ինչքան երկար կը տևէ այս օրը: Հայր երկնաւոր, տո՛ւր ինձ համբերութիւն տանել այս վերջին հարուածին, որ իմ սե բաղդը տալիս է սրտիս: Հայ, դա կը լինի վերջինը, որովհետև էգուց կազատուիմ ամեն փորձանքից և կը հանգստանամ իմ Սմբատի սիրող կուրծքի վրայ: — Ուրեմն պինդ կաց իմ խեղճ սիրտ, այսօր էլ

պի՛նդ կա՛ց և համբերի՛ր, որ աւելի մեծ ի-
րաւունք ունենաս աւելի պայծառ ու բաղ-
դաւոր օրերի վրայ, որոնք էզուցվանից սպա-
սու՛մ են քեզ: (Նա նստում է աթոռի վրայ
և տխուր նայում է մի կողմը: Փոքրից յե-
տայ մտնում է աջ կողմից Շուշանը):

Երկրորդ երևոյթ:

Հ Ա Մ Ա Ս Փ Ի Ի Ռ Ե Ծ Ո Ի Շ Ա Ն:

Շ ու շ. (Համասփիւռը չէ տեսնում նո-
րան. նա դալիս է և ետեից պաչ է անում
նորան): Բարո՛վ Համասփի՛ւռ: (Համասփիւռը
վախեցած վեր է թռչում): Ի՞նչի այդպէս
տխուր ես: Աղջի՛, ամօթ չէ՞ քեզ համար,
որ ես հիմայ եմ իմանում, որ քեզ մար-
դու են տալիս:

Հ. Ա՛խ Շուշան, որ զիտենաս, թէ ի՞նչ
պէս տարաբաղդ եմ ես:

Շ. Ի՞նչ ես ասում: Ես զարմանում եմ:

Հ. Մի՛ զարմանար, այլ խղճա՛ ինձ: Ա՛խ սիրտս կտոր կտոր է լինում:

Ե. Ի՞նչ ես ասում, աղջի՛: Գու՛ շատ բաղդաւոր ես, որ Մարտիրոս բէգի պէս հարուստ ու պատուական մարդ կունենաս; Նորան շատ գովում են:

Հ. Ա՛խ իմ ցաւն էլ այդ է, որ ինձ տալիս են այդ գոված հարուստ մարդուն, որին ես չեմ սիրում:

Ե. Այդ ուրիշ բան է: Բայց եթէ ճշմարիտ է, որ նա բարի մարդ է, նա կաշխատէ սիրել տալ քեզ իւր գլուխը և դու բաղդաւոր կը լինիս:

Հ. Չէ՛, ես չեմ կարող սիրել նորան, որովհետեւ սիրում եմ ուրիշին: Գու՛ զարմանում ես ասածիս վրայ, հա՛ տեսնում եմ, որ բարկանում ես էլ, որ մինչև այսօր ծածուկ պահեցի քեզանից այս բանը, բայց մի՛ բարկանար իմ Նուշան, չէի ուզում վաղ օրօք իմացուէր:

Ե. Ղաւ է, լաւ : Ասա՛ սուսն ես սիրում :

Հ. Այդ յետոյ կիմանաս : Առաջ թող
պատմեմ, թէ ինչտեղ և ինչպէս ծանօ-
թացայ նորա հետ :

Ե. Պատմի՛ր տեսնեմ :

Հ. Միտդ է՞, որ ջատկից յետոյ գնացինք
Սուրբ Նշան ուխտ : Պատարագը նոր էր վեր-
ջացել : Ես գնացի աղբիւրիցը ջուր բերելու,
և նոր լցրել էի կուժը, որ մի սիրուն աղայ
մօտ եկաւ և ջուր ուզեց ինձանից : Ես ամա-
չած դէմ արեցի կուժը նա խմեց, շնոր-
հակալութիւն արեց ու գնաց : Այն օրից
սկսած ես չք կարողացայ հեռացնել նորան
իմ մտքից : Մի քանի շաբաթից յետոյ կու-
ժը ուսիս գալիս էի Երասխից, որ պատա-
հեցի մի ձիաւորի : Դա էլի այն աղան էր :
Նա էլի ջուր ուզեց : Ես խմեցրի և ուզում
էի գնալ, բայց նա յանկարծ ցած թռաւ
ձիուց ու ձեռս բռնեց : «Հողի ջան, աչքի
լոյս», ասաց նա, «ես սիրում եմ քեզ, ա-

ուանց քեզ չեմ կարող ապրել. թէ դու
էլ չես սիրի ինձ, գլուխս կը սպանեմ⁶: Ես
այնպէս վախեցայ, այնպէս մեղքս եկաւ նա,
որ ասացի, թէ ամէն օր դալիս եմ այս-
տեղ, ու փախայ: Այնուհետեւ շուտ շուտ
տեսնում էինք միմեանց: — Ա'խ, այն ինչ
բաղդաւոր ժամեր էին: — Վերջը նա խըն-
դրեց հօրս, որ ինձ նորան տայ, բայց հայրս
չընդունեց նորա խնդիրքը:

Ե. Ի՞նչ պատճառով հայրդ չէ տալիս
քեզ նորան:

Հ. Արսվհետեւ հայրս ուզում է, որ ես
աստիճանաւորի կին լինիմ: Բայց նա զիւ-
ղացի է:

Ե. Ա'խ Համասափիււս, ինչ վատ աստղի
տակ ենք ծնել երկուսս էլ: Արկուսիս էլ
տալիս են մեր ծնողքը նոցա, որոնց ասում
են մեր սրտերը: — Բայց չէ, ինձ չեն ստի-
պի: Ես այսօրեւետ կը տեսնեմ իմ գլխի ճարը:

Հ. Վո՛յ, աղջի՛, ես հասկանում եմ քո

միտքը : Թէ Աստուած կը սիրես մի' աներ այդ
բանը : Գեռ ժամանակ կայ : Խնդրի՛ր , աղա-
ջի՛ր , կարելի է խղճան քեզ քո ծնողքը և
միտքը փոխեն : Հասկացրո՛ւ , որ քեզ յու-
սահատեցնում են , որ դու զլուխդ կը սպա-
նես :

Ե. Շատ եմ ասել , բայց ո՞վ է լսողը :
Այսօր էլ ասացի մօրս այդ բանը . բայց նա
միայն ծիծաղեց ու ասաց , որ ես յիմար
եմ և ինքս չեմ հասկանում իմ ասածը :
— Զէ , սիրելի քոյր , ես անպատճառ կը մեռ-
նեմ : Ես եկայ , կը տամ քեզ վերջին բա-
րովս ու գնամ ջուրն ընկնեմ :

Հ. Զէ , ես չեմ թողնի , որ դու խեղ-
դուես : Ես կը յայանեմ քո մօրը , եթէ չես
հրաժարուի այդ չար մտքից : (Կարծես յան-
կարծ մի բան միտն եկաւ : : Եւ գիտես ի՞նչ
է , Շուշան , կարելի է , որ այդպէսով փրկե՛մ
ոչ միայն քո հոգին ու կեանքը այլ և քո
սիրտը : Այդ բանի մէջ ինձ աւելի հեշտ կը
հաւատայ մայրդ , բան թէ քեզ :

Ե. Ա'խ, Համասփիլու, հաւատան, որ այդ
անօգուտ կը լինի : Նա կը կարծէ, որ ես ու
զու՛մեմ, վախեցնել նորան : Բայց ասե՛նք,
թէ հաւատաց. նա միայն կը զգուշանայ,
որ ես չը սպանեմ ինձ : Բայց այդպէսով ա-
մենեին չի մոռանայ իմ վիճակը : Ինձ էլի
կը ստիպեն ուզել տիրացու Մարկոսին, ո-
րովհետեւ երկու օրից յետոյ պիտի բերեն
իմ նշանը : Բայց մինչև այն ժամանակ ես
արդէն մեռած կը լինիմ :

Հ. (կարեկցութեամբ) : Եռշան, մի՞թէ
հնարք չը կայ վրկել քեզ :

Ե. (Յուսահատ ձայնով) : Չէ, չը կայ :
Ես կը մեռնեմ, կը կատարեմ ճակատիս գը-
րածը : (Փաթաթվում է 'Համասփիլուի վզին
ողբալով) : Համասփիլու, խղճա՛ ինձ, բայց
մի՛ դատապարտեր : Երբ որ մեռած կը լի-
նեմ, աղօթք արա՛ իմ հոգու համար :

Հ. (սաստիկ շարժած սիմուլ է նորան
իւր կուրծքին) : Եռշան, քոյր, մի՛ աներ
այդ բանը. ապրիր :

Շ. (խլվում է նորանից): Չէ, Համասփիւռ
չեմ կարող ապրել: Ինձ կանչում է մահի
հրեշտակը. ես պիտի հետևիմ նորա ձայ-
նին: — Գու քեզ համար մտածիր, շուտով
կը բերեն քո նշանը:

Հ. Հա՛ շուտով կը բերեն, բայց միայն
կարճ ժամանակի համար, որովհետև էզուց
էլ այստեղ չեմ լինի: Ես էրէկ խոստացայ
իմ սիրականին փախչել նորա հետ:

Շ. Ե՛րբ:

Հ. Էզուց կէս օրից յետոյ:

Շ. Աստուած լինի ձեր օգնական և կա-
տարէ ձեր սրտի խարհուրդը: — Բայց ո՞վ է
քո սիրելին, Համասփիւռ, ի՞նչի ես թաղ-
ցնում ինձանից նորա անունը:

Հ. Գեղեցիկ ու պատուական տղայ: Նա
մեր գիւղացի չէ, այլ Զուղայեցի:

Շ. Ի՞նչ է նորա անունը:

Հ. Սմբատ:

Շ. Ի՞նչ, ողորմելի աղջիկ, Զուղայեցի

Սմբատ:

Հ. Հա՛, Զուղայեցի Սմբատ : Բայց ի՞նչի
այդպէս վախեցար : Ճանաչում ե՞ս նորան :

Շ. Զէ՛, չեմ ճանաչում : Ի՞նչ բանի է :

Հ. Նա ծածուկ ապրանք է անցկացնում
միւս ափից :

Շ (սաստիկ վախեցած) : Տէ՛ր, Աստուած,
այս նա է՞ :

Հ. (նոյնպէս վախեցած) : Ո՞վ, ո՞վ Շու-
շան, ի՞նչ ես ասում :

Շ. Դու ասում ես, որ քո սիրականի ա-
նունը Սմբատ է, Զուղայեցի է և ծածուկ
ապրանք է անցկացնում միւս ափից. ասում
ես, որ էգուց կէս օրից յետոյ կը գայ քեզ
փախցնելու. բայց — ա՛խ Աստուած, ինչպէս
ասեմ — Համասփիլու, իմ ողորմելի քոյր,
հաւաքիր քո հոգու բոլոր զօրութիւնը,
անդացրո՛ւ սիրտդ, որովհետեւ այն բանը որ
ես հիմայ պիտի ասեմ քեզ, կտոր կտոր
կանէ քո սիրտը և կը ոչնչացնէ քո բոլոր
քաղցր յոյսերը : — Ա՛խ, ի՞նչի պիտի լինիմ

քո բօթաբերը: Խեղճ աղջիկ, քո Սմբատը
սպանած է:

Հ. (սաստիկ յուսահատված ձայնով): Վայ
ինձ, վայ իմ գլխին: — Շուշան, այդ ի՞նչ
ասացիր: — Դու կրակ տուիր սիրտս: — Ա՛խ
— վայ:

Շ. (Աչքերը սրբելով): Խեղճ Համասփիւռ:

Հ. Վայ, վայ, հազար վայ ինձ: — Եր-
կի՛նք, ի՞նչի չես փուլ գալիս ինձ վրայ, գե-
տի՛ն, ի՞նչի չես կուլ տալիս ինձ: — Ա՛խ, ա՛խ:
(վեր է ընկնում թուլացած):

Շ. (վազում է նորան օգնելու): Համա-
սփիւռ, վայ, ձայն հանիր: — Համասփիւռ,
ա՛խ, ի՞նչ անեմ: — (Շարժում է նորան):
Համասփիւռ, Համասփիւռ:

Հ. (աչքերը բաց է անում): Ա՛հ, իմ
Սմբատը սպանած է:

Շ. (կարեկցութեամբ): Սիրտդ պինդ
պահիր: — Ա՛խ, ի՞նչի ասացի:

Հ. Ուրեմն սպանած է իմ Սմբատը, ու-

րեմն ես հիմայ անտէր մնացի : — Շուշան ,
միթէ ճշմարիտ է , ինչ որ ասացիր : Ա'խ ,
գու Կարդացիր իմ մահու վճիռը :

Շ. Ա. փահս , որ ճշմարիտ է : Ա. հա' ինչ
պէս իմացայ այդ բանը : Ա. յսօր քո մայրը
եկեկ էր մօրս մօտ և պատմեց , որ այսօր
առաւօտը վաղ զազախները սպանել են Ջու-
ղայեցի Սմբատին ապրանք փախցնելու ժա-
մանակ : Պատք Աստուծոյ ազատուեցայ նո-
րանից , Պասաց մայրդ : Նա ինձ շատ վա-
տու թիւն է արել և Աստուած տուեց պա-
տիժը :

Հ. Ա'խ , եթէ նա ուրախանում է , ուրեմն
ճշմարիտ է : (Առու թիւն , յետոյ հաստատ
ձայնով) : Շուշան , ուզում ես անպատճառ
խեղդուել :

Շ. Անպատճառ :

Հ. Ե՞րբ :

Շ. Ել ինչ ուշացնեմ . ես իսկոյն կերթամ :

Հ. Շուշան սպասիր մինչև առաւօտը :

Շ. Ի՞նչի համար :

Հ. Ես էլ քեզ ընկեր կը դառնամ :

Շ. (Զարմացած) Համասփիւռ :

Հ. Հա՛, ես կը խեղդուեմ քեզ հետ: Երբ որ մարդու աստղը վեր է ընկնում, խեղդն մեռնում է այն մարդը: Իմ աստղը վեր է ընկել, ես էլ ի՞նչպէս ապրեմ :

Շ. Համասփիւռ, լաւ մտածիր, թէ ի՞նչ ես ուզում անել: Հիմայ սիրտդ շփոթուած է, հանդարտուիր :

Հ. Էլ շատ մտածել հարկաւոր չէ: Ես խօսք եմ տուել Սմբատին, որ առանց նորան չեմ ապրի, և կը կատարեմ իմ խոստմունքը: Մահը բաժանեց ինձ նորանից և միայն նա էարող է էլի միացնել ինձ նորա հետ:

Շ. Համասփիւռ, ուրեմն ուզում ես խեղդուել :

Հ. Հա՛, ուզում եմ, միայն խնդրում եմ, սպասիր մինչև առաւօտը: Հիմայ չեմ կարող, վախենում եմ բռնեն: Եուշան, կը սպասեմ ինձ :

Շ. Նաւ, կը սպասեմ: Ես այս շաբաթ
պաս եմ պահել, ուրեմն էգուց կարող եմ
հաղորդուել: Պատարագը կը վերջանայ թէ
չէ, կերթամ Երասխի օփը և այնտեղ կը
սպասեմ քեզ սպիտակ քարափի մօտ:

Հ. Նաւ, համաձայն եմ: Ելի մի բան եմ
խնդրում, չը մոռանաս պատարագից նշխար-
քի մասը բերել ինձ համար:

Շ. (գրկում է համասփիւռին): Ուրեմն
էգուց կը մեռնենք, համասփիւռ:

Հ. Հա՛, մենք միասին կը մեռնենք:
(Բակի կողմից մանում են երեք կին: Հա-
մասփիւռը և Շուշանը գլուխ են տալիս նո-
ցա և ձեռները պաշում):

Զորրորդ երևոյթ:

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ և ԵՐԵՔ ԿԻՆ:

1 Կ ի ն ը: (Համասփիւռին): Շնահաւոր
լինի, որդի, քո բաղդաւորութիւնը. Աստ-
ուած երկուսիդ միասին ծերացնէ:

2 Կ. Աչքդ լոյս, լաւ բաղդի արժանա-
ցար: Բաղդաւ որ լինիք, մի բարձի ծերանաք:

3 Կ. Ի հարկ է մեզ համար էլ շատ
պարծանք է, որ մեր գիւղի աղջիկը կը դառ-
կայ այնպիսի երևելի մարդու կին: Թող
թշնամու աչքը դուրս գայ:

Համ. (տխուր): Շնորհակալ եմ: Ես
հաւատում եմ, դուք իմ լաւն էք կամե-
նում: (Շուշանին մի կողմը) Եթէ գիտե-
նան, թէ ինչպէս անողորմ ծաղր են անում
ինձ վրայ. (նոցա): Համեցե՛ք, նստեցե՛ք
խնամիներ: (Կանայքը նստում են):

1 Կ. Աննան ի՞նչտեղ է: Ով գիտէ ու-
րախուժ ենից չը գիտէ, թէ ինչ անէ: Տես-
նում ես պառաւին, ինչ արեց. այնպէս ծա-
ծուկ բան բռնեց, որ մինչև այսօր ոչ ոք
բանից տեղեկութիւն չունէր:

3 Կ. Հա՛, ի՞նչ է, ես ու իմ հոգին, որ
շատ լաւ արեց: Ապա այն լաւ է, որ վաղ-
օրօք բոլոր աշխարհը իմանայ: Կարելի է

բանը ինչպէս է փոխվում, ի՞նչի չար լեզու-
ների տակ ընկնի մարդ և թշնամուն ուրա-
խացնէ: Շատ լաւ արեց, խելօք, խելօք Աննա:

2 Կ. Ի՞նչ է ասում սա: Ո՞վ է մեղա-
նից նորա թշնամին, որ ուրախանար: Ի՞նչ
է, վախենում էր, որ փեսան ձեռիցը խլենք:

3 Կ. Ո՞վ է ասում, թէ վախենում էր:
Մի խօսքով չուզեց, որ բանը չը վերջա-
ցած իմացուի:

2 Կ. Հերիք է լաւ, մի՛ տաքանաք: Գի-
տէք ինչ է, այս տարին հարսանիքների տա-
րի է: Զորսը ես ՚գիտեմ. Համասփիւռինը,
Շուշանինը, Աուկասենց Մարիամինը ու Բաղ-
դասարենց Գայանինը:

1 Կ. Ես էլ մի հարսանիք կուտեցնեմ
ձեզ, թէ որ մի լաւ աղջիկ կը ճարեմ Կա-
րապետիս համար: Մի նորա կարմիրն էլ
կապէի յետոյ, հողը մտնէի:

3 Կ. Ի՞նչ այդ բանը ի՞նչ ասա՛: Այն-
պէս աղջիկ ճարեմ, որ քո հաւանածը լինի:

1 Կ. Ո՞ւր է, երանի չի լինի. շատ շը
նոր հակալ կը լինիմ:

3 Կ. (մի կողմը): Սա շատ սրտով հարս
է ուղում: Աշխատեմ աղջիկս սորա աղային
տամ:

2 Կ. (Համասփիւռին և Շուշանին): Գուք
ի՞նչ էք այդպէս տխուր մի կողմը քաշուել.
կարծես թէ աշխարհի ցաւը ձեզ են տուել.
մանաւանդ դու, Համասփիւռ: Ինչ նորա-
հարս է է:

3 Կ. Հը, ինչ ես տխրել, աղջի: Այսօր
քո նշանաուէքն է, բայց մենք քեզանից ու-
րախ ենք: (Բռնում է ձեռից ու շարժում է):
Հը, մի ծիծաղի՛ր տեսնեմ:

Համ. Ի՞նչպէս ծիծաղեմ, որ ծիծաղս
չէ դալիս:

3 Կ. Լսում է՞ք: Աղջկան մարդու են տա-
լիս և չէ ուրախանում: Հաւատալու բան է:

Համ. Հաւատան, խնամի Մարթա, որ
ամենեւին ուրախ չեմ: Ես այստեղ իմ հօր

տանը շատ բաղդաւոր եմ, բայց նորա ձեռին ո՞վ գիտէ:

3 Կ. նորա ձեռին աւելի բաղդաւոր կը լինիս, աղջի:

1 Կ. (դուրս նայելով դէպի բակը): Մահտեսին գալիս է, եկէ՛ք գնանք միւս սենեակը:— Շուշան քո փեսացուն էլ հետն է:

Շ ու շ. (մի կողմը): Մահը տանէ նորան: (Ամենքը շուտ դուրս են գնում ձախ կողմից):

Հինգերորդ երևոյթ:

Մ. ԽԱԶԱՏՈՒՐ, ՏԻՐԱՅՈՒ ՄԱՐԿՈՍ Լ ՄԻ ՔԱՆԻ ԳԻՒՂԱՅԻՆԵՐ (մանուկներն բակի կողմից):

Մ. Խ ա շ. Եկէ՛ք, համեցէ՛ք, հարեաններ, բարով էք եկել, հազար բարի, ձեր տունն է. համեցէ՛ք նստեցէ՛ք:

Տ. Մ ա թ. Բարով, պարոն մահտեսի, Աստուծոյ օրհնութիւնը անպակաս լինի քո

տանից, միշտ այսպէս ուրախու թեամբ լի լինի քո տունը: Քո ուրախութիւնը մերն է, մենք էլ քոնն ենք:

Մի գիւղ. Աստուած հաստատ պահէ մեր տանուտիրոջ տունը. նա՛ մեզ լաւ է կառավարում: Աստուած նորան մեր զլիւից անպակաս անէ:

Ա մէն ք ը: Ա մէն (նստում են):

Խ ա չ. Նորհակալ եմ: Աստուած ամենիդ բարի տայ: Մարդս մարդով է. դուք ինձանով, ես ձեզանով: Աստուծով այսուհետեւ աւելի լաւ կերթայ մեր ամենի բանը:

Մի գիւղ. Աստուած հաստատ պահէ Մարտիրոս բէգին. մենք նորանից շատ ողորմութիւններ ենք սպասում:

Տ. Մ ա ը. Ես էլ յոյսս դրել եմ քեզ ու Մարտիրոս բէգի վրայ: Դուք թէ մի ճար կանէք ինձ, թէ չէ էլ յոյս չը կայ:

Խ ա չ. Գիտեմ, ինչ ես ասում: Շուտով հարսանիքդ արա՛, որ քեզ էլ ձեռնադրել տանք:

Տ. Մ ա ր. Պսակուելը հեշտ է, բայց մարդ
չունիմ Աթոռում, որ աշխատէ ձեռնադրել
տայ ինձ : Տէր կարասկեալը շատ ծերացել է
ու միշտ հիւանդ է. էլ չէ կարողանում կա-
տարել իւր պաշտօնը, ինչպէս հարկն է :
Թող նա այսուհետեւ հանդիստ ապրի և
աղօթք անէ իւր հոգու համար : — Մար-
տիրոս բէգը բարեկամներ շատ կունենայ Ս.
Էջմիածնում. ի՞նչ կը լինի, մահտեսի, մի
լաւութիւն անեա, խնդրես նորան, որ գրէ
իմ մասին բարեկամներից մինի վրայ : Ի հարկ
է առանց աջահամբոյր չեմ գնայ : Հաւա-
տան, որ իմ օրումը չեմ մոռանայ քո լա-
ւութիւնը. ես միշտ աղօթք կանեմ քո
տան համար, քանի որ կենդանի եմ :

(Լսվում է բեմի ետեւից զուռնի ձայնը) :

Խ ա չ. (Ժպտելով) : Լաւ է, լաւ, տի-
րացու, ես անպատճառ կը խնդրեմ Մարտի-
րոս բէգին : — Ահա նշանը բերում են :

Տ. Մ ա Ր. Շ ա տ շ ն ո Ր հ ա կ ա լ ե մ , մ ա ՚ հ ~
տ ե ս ի : Ա ս ա ու ա ծ աւ ե լ ի կ ա Ր ո Ղ ու թ իւ ն տ ա յ :
(Ա մ է ն ք ը Վ ե Ր ե ն կ ե ն ու մ տ ե Ղ ե Ր ի յ) :

Վ ե յ ե Ր ո Ր ղ ե Ր ն ո յ թ :

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ն Ե Ր Ը , Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս Բ Է Գ , Պ . Յ Ա ~
Ր Ո Ի Թ Ի Ի Ն Լ Մ Ի Ք Ա Ն Ի Ն Ո Ր Մ Ա Ր Դ Ի Բ :

(Ա մ ն ն ի յ տ ա ջ մ ա ն ու մ է մ ի մ ա Ր ղ , գ լ ի ս ի ն
դ Ր ա ծ փ ե ս ա յ ի ը ն ծ ա ն ե Ր ը , ո Ր ե ն ե Ր կ ու գ ը ~
լ ու խ շ ա Ր ա Ր , մ ի ք ա ն ի ն ու ո ը և զ ա ն ա զ ա ն
ք ա Ղ ջ Ր ե Ղ է ն ն ե Ր , ե Ր կ ու ը ա Ղ զ ա Ղ ի , 20 հ ա տ
ո ս կ ի և մ ի ո ս կ է մ ա տ ա ն ի : Ը ն ծ ա ն ե Ր ը ծ ա ծ ~
կ ա ծ ե ն մ ի մ ե ծ մ ն ա տ ք ս է կ ա Ր մ ի Ր թ ա շ կ ի ~
ն ա կ ու Վ : Ն շ ա ն ը ե Ր ո Ղ ի ե տ ե ի յ մ ա ն ու մ ե ն
Մ ա Ր ա ի Ր ո ս ը է գ ը , պ . Յ ա Ր ու թ իւ ն ը և մ ի ք ա ն ի
մ ա Ր ղ ի ք : Մ ա Ր ա ի Ր ո ս ը է գ ը հ ա զ ա ծ ու ն ի ո ս կ է
ժ ա ա զ աւ է ն ն ե Ր ու Վ զ ա Ր զ ա Ր ա ծ չ ու խ ա յ , կ ու ը ծ ~
ք ի ն ե Ր կ ու մ ն զ ա լ և պ ա շ ա տ ծ ն ա կ ա ն թ ու ը ը
ու ս ի յ ը կ ա խ ա ծ : Ն Ր ը ո Ր ն ա մ ա ն ու մ է , բ ո ~
լ Ր զ իւ զ ա ջ ի ն ե Ր ը Վ ե Ր ե ն ա ու ն ու մ գ զ ա կ ն ե Ր ը
և խ ո Ր ը գ լ ու խ ե ն տ ա լ ի ս ն ո Ր ա ն) :

Ն շ ա ն ք ե ռ ո ղ ը . (ցած է դնում ըն-
ծայները և կանչում է բարձր ձայնով) : Աստ-
ուած շնորհաւոր անէ :

Հ ի ւ ը ե ը ը . Աստուած շնորհաւոր անէ :

Մ ա ը . բ . (Խաչատուրին, որ առաջ է դա-
լիս խորը գլուխ տալով) : Բարով, մահտե-
սի, հնչալէս ես :

Խ ա չ . Շատ լաւ եմ, ծառադ եմ : Հա-
ղար բարի ես եկել : Համեցէք նստիլ, քո
տունն է :

Մ ա ը . բ . (նստում է աթոռի վրայ և
նորա կողքին միւս աթոռի վրայ պ. Յարու-
թիւնը) : Տանրցիքդ լաւ են :

Խ ա չ . Փառք Աստուծոյ : Քո ողորմու-
թիւնը, որ անպակաս լինի մեզանից, միշտ
լաւ կը լինինք :

Մ ա ը . բ . (հիւրերին) : Նստեցէք, ինչ
էք կանդնել : (Ամէնքը նստում են խալիչա-
ների վրայ) :

Պ . Յ ա ը ո լ թ իւ ն : Մահտեսի Խաչա-

տուր, ահա՛ մեր պատուական պարոն թարգմանը, Մարտիրոս բէգը կամենում է բարեկամանալ քեզ հետ և ուզում է քո աղջկան իւր համար կին: Ի՞նչ կասես:

Խ ա չ. Հոգևով սրտով ուրախ եմ:

Պ. Յ ա ը. Ուրեմն բանը վերջացած է:

Խ ա չ. Վերջացած է:

Պ. Յ ա ը. (բաց է անում ընծաները)

Ահա՛ նշանը: (Մի մի ցոյց է տալիս): Մի ոսկէ մատանի, երկու լաւ բաղդադի և 20 հատ ոսկի: Աստուած շնորհաւոր անէ: (Նըշան բերողը ածում է մի բաժակ և տալիս է նորան): Աչքդ լոյս, մահտեօի: Նորափէսի ու նորահարօի կենացը: Աստուած երկուսին միասին ծերացնէ, սիրով ու բաղդաւոր լինին: (Ամէնքը մի մի բաժակ խմում են դլուխ տալով Մարտիրոս բէգին ու խաչատուրին: Մի դլուխ շաքար տալիս են մինին, որ կոտրատէ և ամենին բաժանէ):

Մ ա ը. բ. Գիտես ի՞նչ է, մահտեօի, ես

չեմ հաւանում ձեր սովորու թիւնը, որ նորահարսին թաքցնում էք: Օրհնածներ, գողացած չէ, որ վախենում էք: Թող ամէնքը տեսնեն:

Խ ա չ. Ղաւ ես հրամայում, ծառադեմ, բայց մեր սովորու թիւնը այսպէս է. ինչպէս որ մեր պապերը վարուել են, մենք էլ այնպէս ենք վարվում:

Մ ա ը. Բ. Բայց այդ շատ վատ սովորու թիւն է: Թիֆլիզ որ էի, այնտեղ մի քանի անգամ պատահեցի և շատ հաւանեցի այնտեղի սովորու թիւնը: Աս ուզում եմ, որ այստեղ էլ մի և նոյն կերպով լինի:

Խ ա չ. Քո կամքն է, ինչպէս որ կը հրամայես, թող այնպէս լինի:

Մ ա ը. Բ. Այնտեղ հարսին դուրս են բերում փեսայի մօտ և սա ինքը իւր ձեռով տալիս է նշանը ու պաչ է անում:

Տ. Մ ա ը. (մի կողմը): Վատ չէ:

Պ. Յ ա ը. Շատ լաւ է ասում Մարտի-

րոս բէզը: Թող աղջկան դուրս բերեն:

Մ ա թ. Բ. Բայց երեսը բաց, որովհետեւ
ես երեսը բաց կը պահեմ նորան:

Խ ա չ. Ձեր կամքն է: (Բաց է անում
գուռը և կամաց մի քանի խօսք է ասում):
Խսկոյն կը բերեն հարսին:

Մ ա թ. Բ. Ես շատ ուրախ եմ, մահտե-
սի, որ չես հեռուում հին յիմար սովորու-
թեանը: Աշխարհս օրէցօր լուսաւորվում է
և առաջ է գնում: Շատ բան կայ, որ ա-
ռաջ լաւ էր, բայց հիմայ անպէտք է:

Եօթներորդ երևոյթ:

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ, ՀԱՄԱՍՓԻՒՌ, ԱՆՆԱ և ՄԻ
ԿԻՆ: (Աննան և կինը քաշ տալով դուրս
են բերում Համասփիւռին: Նա շատ գու-
նաթափ է և տխուր և ոչ ոքի վրայ չէ նայում):

Խ ա չ. Ահա, պարոն փեսայ, այս իմ կինն
է, քո աղախինը: (Աննան գլուխ է տալիս):

Եւ սա իմ աղջիկը, որ տալիս եմ քեզ:
Հիմայ դու գիտես, թէ ինչպէս կը բաղդա-
ւորես նորան: Սորանից աւելի որդի չունիմ:

Մ ա թ. ք. Ես խոստանում եմ լաւ մարդ
լինել քո աղջկայ համար և ամէն կերպ
կաշխատեմ բաղդաւորել նորան:

Խ ա չ. Աստուած հաստատ պահէ քեզ:
— Դէհ, հիմայ նշանը տուր:

Մ ա թ. ք. (վեր է առնում մատանին և
մօտ է գնում Համասփիւռին, որ բոլոր մար-
մնով դողում է):

Պ. Յ ա թ. Մահտեսի, օրհնիր փեսայիդ
ու աղջկայդ:

Խ ա չ. Աստուած օրհնէ ձեզ իմ դա-
ւակներ. շատ ապրիք ու բաղդաւոր ապրիք:
Աստուած ձեզ միշտ սիրով պահէ:

Հ ի ւ թ ե թ ը. Ամէն, Աստուած շնորհա-
ւոր անէ:

Մ ա թ. ք. (բռնում է Համասփիւռի ձե-
ռը, ու հագցնում է մատանին և գոռով
համբուրում է երեսը):

Հ ա մ. (սաստիկ ձայնով) : Ա՛հ դժոխային
համբոյր : (Ուշաթափվում է և վեր է ընկ-
նում : Աննան և կինը աշխատում են յետ
բերել նորան. ծագում է սաստիկ շփոթ) :

Մի քա նի ձայն եր : Ջուր բերէք,
Ջուր . հաշի սիրտը գնաց :

Վարագոյրը շուտ ցած է ընկնում :

ՋՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ:

(Առաջին և երրորդ գործողութեան սենեակը մահտեսի խաչատուրի տանը: Առաւօտ է):

Առաջին երևոյթ:

Հ Ա Մ Ա Ս Փ Ի Ի Ռ:

(Դուրս է գալիս ձախ կողմից մի կուժ ձեռին, որ վեր է դնում անկիւնում):

Ահա՛ բոլորը վերջացրեցի. վերջին անգամ աւելցի տուն ու տեղը, սրբեցի ու կարգաւորեցի: Երբ որ ծնողքս յետ կը դանժամից, ամէն բան կարգին կը դանեն, ամէն բան կը լինի իւր սովորական տեղը, միայն մի բան պակաս կը լինի տանը — նոցա աղջիկը: (Հանում է ծոցից նշանի մատանին և դնում է պատուհանի վրայ): Այս մատանին կը դնեմ այստեղ, որ շուտով գանէ մայրս: Սորանով ուզում էին կապել ինձ մի տղա-

անարդու հետ, որի համար միշտ մեռած պիտի լինէր իմ սիրտը: — Ա՛խ իմ սիրելի ծընողք, սխալուեցաք: Գուք կարեցիք սիրոյ կապը, որով կապած էին երկու սիրող սրտեր, մահը կօզնէ ինձ կտրել այն կապը, որով դուք կապեցիք երկու միմեանց օտար սրտեր: — Մահու հրեշտակը ամենակարող է. նա է վշտով ծանրացած սրտի մխիթարութիւնը, յուսահատուած սրտի վերջին յոյսը — ուրեմն և իմ յոյսը: Այժմ միայն նա կարող է կրկին միացնել ինձ իմ Սմբատի հետ: (Առութիւն. Հեռուից լսվում է զանգակի ձայն):

Շուտով կը վերջանայ պատարագը և կը գայ իմ մահու ժամը: — Մնաս բարով իմ հօր տուն, ես տեսնում եմ քեզ վերջին անգամ: Ա՛խ, քանի քանի ուրախ օրեր անց եմ կացրել քո պատերի մէջ, բայց հիմայ ես թողնում եմ քեզ, և այսուհետե էլ չի կոխի իմ ոտը քո շեմքը: Ես այստեղ աշ-

խարհ եկայ անհողս, բաղդաւոր երեխայ, հիմայ դուրս եմ գնում այստեղից յուսահատուած տարաբաղդ աղջիկ: — Դուք էլ մնաք բարով, իմ սիրելի ծնողք, ձեր մեղք է, կարելի է այս էր գրել ճակատիս վրայ իմ սև բաղդը: Իմ հայր և մայր, շնորհակալ եմ ձեր սիրոյ ու խնամքի համար, որ միշտ վայելել եմ ես: Երբ որ լսէք իմ մահու լուրը, ան, չասէք թէ ես ապերախտ զաւակ էի, չանիծէք ինձ, այլ աղօթք արեցէք իմ խեղճ հողու համար, որ և երկնաւոր հայրը ներէ ինձ իմ մեղքերը:

(Նա երկար միջոց կանգնած է խորը մտածմունքի մէջ):

Ել ինչ եմ կանգնել: Հիմայ պատարազը արդէն վերջացած կը լինի: Գնամ, գնամ, որ Շուշանը շատ չք սպասէ ինձ:

(Վեր է առնում կուժը և շտապով դուրս է գնում):

(Տեսարանը փոխվում է և երևում է Նրասիմ:

առիւղ ինչպէս առաջին գործողութեան առաջին
երևոյթի մէջ . առաւօտ է) :

Երկրորդ երևոյթ :

ՄԻ ՔԱՆԻ ԳԻԻՂԱՅԻ ԱՂԶԻԿՆԵՐ (գալիս են
երգելով , ամէն մինը մի մի կուժ ուսին) :

Գարունքն եկաւ ու զարդարեց
Մեր դաշտերը ծաղիկներով ,
Այգիներում վարդը բացուեց ,
Սոխակն երգեց անոյշ ձայնով :

Մեր էլ ինչպէս ծաղիկները
Բացուել ենք , ինչպէս սիրուն վարդ .
Թող դան և մեր սոխակները ,
Թող դան երգեն մեզ սէր ու բաղդ :

Հայ տղաներ , ձեզ ենք կանչում ,
Գուք էք մեր քաղցր սոխակները .
Հայ տղաներ , ձեզ ենք սիրում ,
Զեզ ընծայում մեր սրտերը :

(Լցնում են կժերը) :

1 Ա Ղ Ջ Ի Կ Ը: Հիմայ Համասփիւռի հետ
էլ խօսել չի լինի:

2 Ա Ղ Ի հարկ է, ո՞վ դիմայ նորան. մեծ
մարդու կին դառաւ:

3 Ա Ղ Մինչև հիմայ տանուաիրոջ աղ-
ջիկ էր, այնպէս քիթը ցից էր անում ու մեծ
մեծ կոտորովում, հիմայ մեծաւորի կին դա-
ռաւ, ի հարկէ աւելի կը քրքրուի:

4 Ա Ղ Ի՞նչի էք բամբասում խեղճ աղ-
ջկան: Նա ամենևին հպարտ չէ, ինչպէս որ
դուք ասում էք:

3 Ա Ղ Առաջ նա հպարտ չէր, բայց մի
քանի ժամանակ է, որ շատ փոխուել է. ա-
մենից հեռանում է և միշտ մենակ է ման
գալիս, կամ Շուշանի հետ: Մի հարցնող
լինի, թէ նա ի՞նչով լաւ է մեզանից:

4 Ա Ղ Օ՛, Աստուած ազատէ քո լեզուից
Անթառամ: — Նա քեզ ի՞նչ է արել:

2 Ա Ղ Հա ի՞նչ է, սուտ չէ ասում Ան-

Թառամբ : Գու ի՞նչ ես միշտ նորա կողմը
խօսում : Նա քոնն ո՞վ է :

4 Ա. Ղ. Ո՞վ պիտի լինի, քոյրս չէ ու
ազգականս : Ես ինչ որ ճշմարիտ է այն եմ
ասում :

1 Ա. Ղ. (Ժաղը անելով) : Մեռնեմ քո
ճշմարիտ հոգուն. դու սուրբ ես :

2 Ա. Ղ. Ահա՛ Շուշանը գալիս է : Նա ե-
րէկ Համասփիւռենց տանը կը լինէր, հարց-
նենք տեսնենք ճշմարիտ է, որ ասում են,
թէ փեսան պաշ է : արեւ աղջկան նշանը
տալու ժամանակ :

1 Ա. Ղ. Ես իմացայ, որ այդ ժամանակը
Համասփիւռը թուլացել է : Ասում են, որ
նա չէ ուզում դառնալ Մարտիրոս բէգի
կինը :

(Գալիս է Շուշանը կուժը ուսին) :

Նկրորդ երևայթ :

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ Լ ՇՈՒՇԱՆ :

3 Ա. Ղ. Օ'հ, բարով Շուշան : Արի, արի
քեզ ենք սպասողմ : Նոր բաներ կը գիտե-
նաս, պատմի'ր :

Շ ու շ . Ի՞նչ նոր բան էք ուզում : Ես
ոչինչ չը գիտեմ :

3 Ա. Ղ. Ինչպէս չը գիտես : Երէկ Համա-
սփիւռենց տանը էի'ր :

Շ. Հա այնտեղ էի, ի՞նչ է :

2 Ա. Ղ. Շուշան, Շուշան, հոգուդ մեռ-
նեմ, ձշմարիտ է՞, որ փեսան պաչ է արել
աղջկան :

Շ. Ձշմարիտ է :

2 Ա. Ղ. Է'հ, գնա՛, ինչպէս ես խօսում,
լաւ, մանրամասն պատմի'ր :

Շ. Ել ուրիշ ի՞նչ ասեմ, թէ ասում եմ,
որ ձշմարիտ է քո իմացածը :

1 Ա. զ. Ասուած են Համասփիւռը թուլացել է, երբ որ փեսան պաշ է արել նորան, և որ նա չէ ուզում դառնալ Մարտիրոս բէգի կիներ:

Շ. Ճշմարիտ է:

Ա. զ. Ճշմարիտ է, ճշմարիտ է: Ել ուրիշ խօսք չէ դուրս գալիս բերանից: Բայց ի՞նչ է պատճառը:

Շ. Պատճառը ես չը գիտեմ:

3 Ա. զ. Հողը գլխին: Նորանից լաւ մարդ ի՞նչտեղ կը ձարէ: Չլինի թէ ուզում է մեծաւորի հարս դառնալ:

4 Ա. զ. Կաւ, շատ մի խօսէք, եկէք գնանք:

1 Ա. զ. Գնանք: Չես գալի՞ս, Շուշան:

Շ. Չէ, գուք գնացէք. ես այստեղ կը մնամ:

(Աղջիկները գնում են, մնում է Շուշանը):

Զորրորդ երևոյթ :

Շ Ո Ւ Շ Ա Ն

(Կարձ լուսթենից յետոյ, նայելով իւր չորս
կողմը) :

Ինչ սիրուն առաւօտ է, ինչպէս պայծառ
փայլում է արեգակը — բայց ա՛խ, ինձ
համար շուտով կը խաւարի յաւիտեան :
(Մի տխուր հայեացք ձգելով իւր չորս կողմը)
: Ա՛խ ինչպէս գեղեցիկ է բնութիւնը,
այսպէս սիրուն ամենեին չէր երևացել նա
ինձ, կարելի է այն պատճառով, որ վերջին
անգամն եմ տեսնում : Այսօր կարծես թէ
օդն էլ աւելի մաքուր է, երկինքն էլ աւելի
կապոյտ, արեգակն էլ աւելի պայծառ :
Ահա՛ այստեղից երևում է մեր թթի ծառը :
Տես, ինչպէս տխուր շարժում է գլուխը,
կարծես թէ կանչում է ինձ . Շուշան յետ
եկ, ինձ ի՞նչի ես թողնում, դու ինձ սի-
րում էիր : —

Ա'խ ինչ թանգ բան է կեանքը, ինչպէս ուզում եմ ապրել, բայց ոչ թէ այն կեանքով, որ իմ ծնողքը պատրաստում են ինձ համար: Ապրել չը զգալ կեանք, ապրել և չուրախանալ կեանքով, ապրել առանց կամքի, ինչպէս մի անասուն — ա'խ այդպիսի կեանքը մահացը վատ է: — Տէր Աստուած, ամէ՞ն տեղ էլ այսպէս անարդուած է կ'ինը, թէ մենակ մեզանում: Մեզ էլ դու չե՞ս սատեղծել: Ի՞նչի տղամարդը վայելում մարդու բոլոր իրաւունքները, իսկ կ'ինը չունի և ոչ միւր: Կարելի է այն պատճառով, որ տղամարդու կուռը աւելի հաստ ու պինդ է, քան թէ մերը: (Դառը ժպիտով): Բայց չէ, մի իրաւունք էլի մնացել է մեզ — ապրել կամ մեռնել: — Այդ չեն կարող խլել մեզանից: — (Ա՛նու թիւն): Ի՞նչի ուշացաւ Համասփիւռը: Զը լինի՞ թէ միտքը փոխեց: (Նայում է դէպի գիւղը): Այս ո՞վ է գալիս: Տէր Աստուած տիրացուն է: Ի՞նչ է ուզում

նա այստեղ: (Վեր է առնում կուժը և մօտ է գնում ջրին):

Հինգերորդ երևոյթ:

ՇՈՒՇԱՆ Լ ՏԻՐԱՑՈՒ ՄԱՐԿՈՍ:

Տ. Մ ա թ. (Տեսնելով Շուշանին դարձա-
ցած կանգնում է մի կողմը): Վա՛հ, ինչ լաւ
պատահեցայ է: (Նայում է դէս ու դէն):
Մենակ է, մարդ չը կայ: Արի կը խօսիմ հե-
տը, տեսնեմ սորա միտքն ինչ է: (Առաջ դա-
լով): Բարով Շուշան ջան, մենակ ի՞նչ ես
շինում այստեղ:

Շ ու շ. (Չէ պատասխանում):

Տ. Մ ա թ. Ի՞նչի երեսդ դարձնում ես ին-
ձանից, հողիս: Ինձ նայի՛ր, մի տեսնեմ
այդ սիրուն աչքերդ:

Շ ու շ. (Չէ պատասխանում):

Տ. Մ ա թ. Նաւ է հա, մի ամաչի՛ր: Այս-
տեղ մեզանից աւելի ոչ ոք չը կայ, որ տես-
նէ կամ լսէ մեզ:

Շ ու շ . Ես քեզ հետ քան չունիմ : Թէ
Աստուած կը սիրես , թող ինձ , հեռացիր
այստեղից :

Տ . Մ ա թ . Ինչպէս տեսնում եմ , դու բա-
նից տեղեկութիւն չունիս , որ այդպէս վատ
աչքով ես մտիկ տալիս ինձ :

Շ ու շ . Ես ոչ ինչ չը գիտեմ , և ոչ էլ
ուզում եմ իմանալ :

Տ . Մ ա թ . Մայրդ չէ՞ ասել քեզ , որ ես
ուզում եմ քեզ վրայ պսակուիլ :

Շ ու շ . Հա , ասել է :

Տ . Մ ա թ . Յետո՞յ , յետոյ , հողիս . դու
նչ ասացիր , դու ի՞նչ ես ասում այդ մա-
սին :

Շ ու շ . Ես նորան ասացի և քեզ էլ
ասում եմ , որ չեմ դառնայ քո կիներ :

Տ . Մ ա թ . Վա՛հ , ի՞նչի՞ , չես հաւանում
ի՞նձ , ի՞նչ է : Մի կարծեր , թէ ես շատ ծեր
եմ (Ուղղուելով) , և ինչպէս տեսնում ես
տղեղ էլ չեմ :

Շ ու շ . Բոլորը մին է ինձ համար : —
Ես մարդ չեմ ուզում :

Տ . Մ ա թ . Քեզ ո՞վ է հարցնում , ու-
զում ես թէ չէ : Ես ուզում եմ քեզ , և
բանը վերջացած է : Երեքշաբթի գիշերը կը
բերեմ նշանը և կը պաշեմ այդ կարմիր
թուշդ : Ես էլ ուզում եմ նոր օրէնքին հե-
տեւել , որովհետեւ շատ հաւանում եմ :

Շ ու շ . Այն օրը մահ լինի ինձ հա-
մար :

Տ . Մ ա թ . Ի՞նչի , հոգիս : (Անամօթա-
բար) : Ես քեզ հիմայ էլ պաշ կանեմ :
(Ուզում է մօտ գնալ) :

Շ ու շ . (պինդ ձայնով) : Չը համար ձա-
կուիս մօտ գալ , կորի՛ր :

Տ . Մ ա թ . (մօտ գնալով) : Շուշան , իմ
գեղեցիկ հրեշտակ , մի պաշ տո՛ւր , հոգուդ
մատաղ . իսկոյն կերթամ :

Շ ու շ . (բարձրացնում է մի քար) :
Գլուխդ կը փշրեմ , թէ որ ձեռը կը սաս
ինձ : Կորի՛ր , ես ատում եմ քեզ :

Տ. Մ ա ը. (յեա ու յեա գնալով): Ի՞նչի
այդպէս բարկանում ես, հողիս: Մի պաշեմ
ուզում, աւելի ոչ ինչ: Կարծում ես թէ պա-
շած տեղը կերեայ: (Մի կողմը): Կայ, կայ,
երբ որ իմը կը լինիս ուրիշ կերպ կը խօ-
սիմ հետդ:

Շ ու շ. (բարկացած առաջ գնալով):
Տիրացու, գնա՛, թէ չէ, Աստուած վկայ, կը
խփեմ այս քարը գլխիդ: — Ահա՛ մարդ է
գալիս, գնա՛, թէ չէ ձայն կը տամ:

Տ Մ ա ը. Լաւ, միտդ պահիր: Երեք-
շաբթի երկու անգամ պաշ կանեմ (գնում է)

Վեցերորդ երևոյթ:

Շ Ո Ի Շ Ա Ն (մենակ):

Ա՛խ, Աստուած, սորան են ուզում տալ
ինձ իմ ծնողքը: — Չէ, իմ նշանածը աւելի
լաւ է սորանից — իմ նշանածը Երասխն է:
Սա շուտ կը սպանէ, շատ չի չարչարի, բայց

նորա ձեռին պիտի տանջուիմ, քանի կեն-
դանի եմ: (Նայում է նորա ետևից): Փառք
Աստուծոյ, դեաց, ազատուեցայ նորանից:
Թէ որ էլի մի փոքր տարակոյս մնացել էր
սրտիս մէջ, նորան տեսնելուց յետոյ այդ
տարակոյսն էլ ոչնչացաւ: Ինքը երկինքը ու-
ղարկեց նորան այստեղ, որ ցոյց տար, թէ
ինչ մարդու ձեռն եմ ընկնելու, եթէ կեն-
դանի մնամ: Հիմայ կարող եմ բոլորովին
համարձակ տալ ինձ մահու ձեռք: — Փառք
Աստուծոյ, ահա՛ համապիւռն էլ զայիս է:

Եթէնկրորդ երևոյթ:

ՇՈՒՇԱՆ և ՀԱՄԱՍՓԻՒՌ (զայիս է կուժը
ուսին):

Շ. (առաջ գնալով): Փառք Աստուծոյ
համապիւռ, եկար. շուտով ամեն բան կը
վերջանայ:

Հ. (ցած է դնում կուժը): Հա Շուշան
ջան, շուտով ամեն բան կը վերջանայ և մենք

յառ իսկանս կը հանդատանանք : — Շատ ժա-
մանակ է այստեղ ես :

Ե. Կէս ժամ կը լինի : Պատարազը վեր-
ջացաւ թէ չէ գնացի տուն, վեր առայ կու-
ժը, որ կարծեն, թէ ջար բերելու եմ գնա-
ցել ու եկայ այստեղ : Շատ սպասեցի, բայց
տեսայ, որ ուշանում ես, և ճշմարիտն ասեմ,
սիրտս սկսեց անհանդատանալ : Ես մտածում
էի, որ չս լինի թէ միտքդ փոխել ես և ես
ի դուր տեղ սպասում եմ քեզ : — Ախ, Համար-
սփիւռ, դժուար քայլ է, որ մենք հիմայ
պիտի անենք : Այդ մի քայլը կը տանէ մեզ այս
աշխարհից միւս աշխարհը, ինչտեղից էլ ոչ
որ յետ չէ գալիս : Ախ, իմ քոյր, պիտի
մարդ շատ տարաբաղդ լինի, որ առանց ամի-
սոսպու անէ այդ քայլը :

Հ. Բայց մի թէ մենք տարաբաղդ չենք,
սիրելի Շուշան, մի թէ կարող է այսուհետեւ
կեանքը դին ունենալ մեզ համար : Կեան-
քը բաղդաւ որների համար է, ոչ թէ մեզ

նման տարաբաղդների համար: Ա'խ, հիմայ
մեր մի հատ ճարը մահն է:

Շ. Ա'խ, Համասփիւռ, ճշմարիտ ես ա-
սոււմ: Ես ինքս տեսնուում եմ, որ ուրիշ ճար
չը կայ մեզ, բացի մահից, և ես հաւատում,
որ ամենեին չեմ վախենում նորանից: Ես
ցաւում եմ միայն այն բանի վրայ, որ մենք
ստիպուած ենք մեռնել: Ի՞նչի մենք էլ պի-
տի չը կարողանանք ապրել: Մեր ո՞ր մեղքի
համար այսպէս խիստ պատժում է մեզ Աստ-
ուած: Ի՞նչի ուրիշները բաղդաւոր են ու
մենք չէ:

Ը. Ձէ իմ քոյր, Աստուած մեղաւոր չէ,
որ մենք տարաբաղդ ենք, այլ մարդիկ. —
Գու ասում ես, որ ուրիշները բաղդաւոր են,
ապա ո՞վ, ցոյց տո՛ւր տեսնեմ: Մեզանում
հազարից մի կին բաղդաւոր չէ: Մեզանում
կինը չէ թէ իւր մարդու օգնականն է ու
ընկերը, չէ, այլ նորա աղախինը: Այդ մենք
փորձով տեսնում ենք ամէն օր, կարելի է

շատերը ծիծաղեն ու յիմար անուանեն մեզ,
բայց թող ով ինչ ուզում է ասէ. մենք մերը
կանենք, — Մենք կը մեռնենք և կը դառ-
նանք հայ աղջիկների նահատակները: Թող
մեր մահով խրատուին մեր ծնողքը:

Ե. Ա'խ, հայր, մայր, ի՞նչի այստեղ հաս-
ցրիք ինձ: Նոր եմ աչքս բաց անում և
պիտի մեռնեմ: Թէ որ այս էր իմ վերջը,
ա'խ, էլ ի՞նչի աշխարհ բերեցիք ինձ:

Զ. Ծուշան, ես տեսնում եմ, որ քեզ
դժուար է թվում մահը: Ապրի՛ր, ես չեմ
ուզում պատճառ դառնալ քեզ:

Ե. Ի՞նչ, ո՞ւմ համար ապրեմ. տիրա-
ցու Մարկոսի համար: — Ա'հ, քանի որ միտս
է դալիս այդ մարդը, կարծես թէ հազա-
րաւոր ձայներ կանչում են ինձ. ողորմելի
աղջիկ, էլ ի՞նչ բանի ես սպասում, շո՛ւտ
ընկի՛ր ջուրը: Ա'խ, չը գիտես թէ ինչ զզուե-
լի ու լիրբ մարդ է այդ տիրացուն: Նահի-
մայ այստեղ էր և ես ստիպուած էի հե-

տը խօսել: Ես լաւ ճանաչեցի նորան: Այդ
բաւական էր ինձ համար, որ կտրէի բոլոր
կապերը, որոնցով կապուած էի ես այս ու-
նայն ու փուճ աշխարհի հետ: — Ե՛կ ընկ-
նենք ջուրը: Ես պատրաստ եմ:

(Բեմի վրայ անց են կենում ամպերի ստուերներ):

Հ. Ես էլ պատրաստ եմ: Բայց Շուշան
ջան, կատարեցի՞ր իմ խնդիրքը: Ես քեզ
խնդրեցի, որ պատարագից մասը բերես ինձ
համար:

Շ. Ա՛խ, հա՛, բերել եմ: (Հանում է ծո-
ցից մի թաշկինակ և նորա մի ծայրից նըշ-
խարքի մասը և տալիս է նորան): Ահա՛ ան:

(Կամաց կամաց մթնում է: Հեռաւոր որսումն):

Հ. (Առնում է նորա ձեռից նշխարքը և
համբուրում է: Յետոյ գնում է մի քանի
քայլ մի կողմը, չորում է և ձեռները բար-
ձրացնելով դէպի երկինքը, ասում է աղեր-
սալի ձայնով), Տէր Աստուած, դու տես-
նում ես երկնքից մահկանացուների բոլոր

Ճաճուկ ու յայտնի գործերը, և ոչինչ կա-
րող չէ ճաճկուիլ քեզանից: Գու ինձ էլ
ես տեսնում, և գիտես, թէ ինչ մտքով
եկել եմ այստեղ: Հայր երկնաւոր, աղա-
չում եմ, զթաճ ու ողորմած եղիր ինձ վրայ:
Ներիւր ինձ իմ առաջուան մեղքերը և այն
սարսափելի մեղքը, որ ես հիմայ պիտի գոր-
ծեմ: (Որոտումն): Ատուած, դու խօսում
ես ամպերի մէջ: — Ա՛խ, երանի թէ հաս-
կանայի քո խօսքերի միտքը — արդեօք նե-
րում ես, թէ դատապարտում ես ինձ: Ա-
րարիչ իմ, ես սիրում եմ քո տուած կեան-
քը, բայց ա՛խ չեմ կարող ապրել, ուրեմն
թող ինձ մեռնեմ: Գատաւոր երկնաւոր,
ա՛խ, քաղցր արա՛ իմ դաաստանը: (Նա
գնում է բերանը նշխարքի մասը և շուտ վեր
է կենում: (Որոտումն): Շուշան, գնանք:

Շ. Արի՛ վերև գնանք այս քարի վրայ ու
այնպէս ընկնենք ջուրը:

(Վերև են գնում քարի վրայ: Գալիս է Գրիգորը):

Գ Ր Ի Գ. (Տեանելով նոցա) : Վահ, Շու-
շան, Համասիլու, այդտեղ ի՞նչ էք շինում :
Զգոյշ կացէք, թէ չէ կրնկնէք գետը . դո-
րա տակը շատ խորն է :

Շ. Մենք ուզում ենք ընկնենք գետը,
Գրիգոր :

Գ Ր Ի Գ. (Զարմացած) : Ի՞նչ, խելագա-
րուել էք, ի՞նչ է, թէ ծաղր էք անում :
Շուտ ցած եկէք, թէ չէ ձայն կը տամ :
(Զայն է տալիս գիւղի կողմը) : Այստեղ ե-
կէք, օգնեցէք, Շուշանը ու Համասիլուը
ուզում են խեղդուել :

Հ. Գրիգոր ջան, այստեղից ձայնդ չի
հասնի : Գնա՛, ասա՛ մեր տանը, որ մենք
խեղդուեցանք. թող չը սպասեն մեզ : (Գրի-
գորը վազում է այնտեղից) : Շուշան, սիրտդ
պինդ պահիր ժամանակն եկաւ — շուտով
կը տեսնուինք երկնքում :

(Գրկում են միմեանց և բաւական միջոց մը-
նում են այդ դրութեան մէջ. (Որոտումն) :

Ծ. Կայց մին էլ նայեմ իմ չորս կողմը :
Ինչպէս յանկարծ մթնեց բոլոր երկինքը :
(Մատով ցոյց է տալիս մի կողմը) : Տես ինչ
սաստիկ անձրև է գալիս այնտեղ , շուտով
այստեղ էլ կը գայ : — Մնաք բարով , հայր ,
մայր , իմ բոլոր սիրելիներ , Շուշանին էլ չէք
տեսնի : (Համասփիւռը անշարժ նայում է
ջրի կողմը) : Համասփիւռ ձեռք տո՛ւր : (Հա-
նում է ծոցից թաշկինակը , որի մի ծայրով
կապում է Համասփիւռի ձեռք , իսկ միւսով
իւր ձեռք) : Գիտե՞ս ինչի համար է այս :

Հ. Ի՞նչի համար :

Ծ. Ար ջուրը չը հեռացնէ մեզ միմեանցից :

Ծ. (Նայում է գէպի գիւղը) : Շուշան ,
գիւղից մարդիկ են գալիս . շուտ ընկնենք , որ
չը վրայ հասնեն :

(Նորա վերջին անգամ գրկում ու համբուրում
են միմեանց) :

Ծ. Մնաք բարով :
Հ. Սմբատ գալիս եմ : } (միասին) :

(Ընկնում են ջուրը : Փայլակ , որոտումն և ան-

ձրև, որ շարունակվում է մինչև դործողութեան վերջը):

Ութերորդ երևայթ :

Ե. ԽԱԶԱՏՈՒՐ, ԱՆՆԱ, և ՄԻ ՔԱՆԻ
ԿԱՆԱՅՔ ու ԳԻԻՂԱՑԻՆԵՐ գալիս են վա-
զելով, իսկ միւս կողմից ՍՄԲԱՏ :

Խ ա չ. } (միասին) Համասփիւռ, որդի,
Ա ն. }

ախ, այս ի՞նչ քան արեցիր մեզ: Ո՞վ էք
քրիստոնեայ, օգնեցէք:

Մ ի կ ի ն: Ա'խ, շուշան, տունս քան-
դուեցաւ: Օգնեցէք, թէ Աստուած կը սի-
րէք:

Ս մ բ. Ի՞նչ է, ինչ է պատահել:

Խ ա չ. Սմբատ, օգնիր, Համասփիւռը
խեղդուեցաւ:

Ս մ բ. Վայ ինձ:

(Սմբատը և մի դիւղացի շուտ ձգում են իրանց
ջուրը):

(Վարագոյրը շուտ ցած է ընկնում):

(Ջուղայի ձորը: Երկու կողմից բարձրանում են երկու վայրենի ծայուեր, որոնց վրայ տեղ տեղ երևում են աւերակներ: Ձորի մէջ տեղը անց է կենում Երասխը: Հեռուից երևում է հին Ջուղան, նորա ետևից գերեզմանատունը, որի քամակում ծածկվումէ գետը: Գերեզմանատան ետևը բարձրանում է մի բարձր լեռուրն, որի վերայ կանգնած է Ամենափրկչի վանքը: Վաղ առաւօտ է, արեգակը նոր է ծագում և գեղեցիկ լուսաւորումէ քաղոր ձորը):

Առաջին երևոյթ:

Ս Մ Բ Ա Տ:

(Իայիս է ձախ կողմից: Նա սաստիկ գունաթափ է և վառտակած):

Ահա՛ քանի օրէ գիշեր ցերեկ անդադար ման եմ գալիս գետի ափերի վրայ պտուէլով իմ սիրականի մարմինը, բայց բոլոր իմ աշխատանքը անպտուղ մնաց մինչև այսօր:

Երկու օրվան ճանապարհ աւելի գնացի ջրի
հետ, հարիւր տեղ մտայ մէջը, իջայ մինչև
յատակը, բայց չը կայ ու չը կայ ոչ մի
տեղ իմ Համասփիւռի մարմինը: — Տէր
Աստուած, մինչև երբ պիտի այսպէս տանջու
իմ: Երկինք, խղճած ինձ, կենդանին չար
ժանացրիր, մեռածին գոնեա մի' խնայեր ինձ
համար: (Առուժիւն, նա մտածելով մանկ
է դալիս յետ ու առաջ):

Երանիս, անողորմ գետ, տո՛ւր ինձ իմ
Համասփիւռին, տո՛ւր, մինչև երբ պիտի պա
հես նորան: — Ա՛հ, կարողանայի ցամաքեցնել
քո աղբիւրը, որ տեսնէի, թէ ի՞նչտեղ ես
թագցրել նորան: — Երանիս, ես կանիծեմ
քեզ, եթէ աւելի երկար կը պահես իմ սիր
րականին: Տո՛ւր, տո՛ւր, դու իրաւունք չու
նիս երեք օրից աւելի պահել նորան, և ա
հա՛ այսօր չորրորդ օրն է: (Բարկացած ու
կատաղած մի քանի քայլ մօտ է գնում
ջրին): Ա՛հ անողորմ գետ, դու ծիծաղում

ես իմ յուսահատութեան վրայ, դու չես
լսում իմ խօսքերս, այլ անդադար առաջ
ես վազում ու բռնանջում, որ չըլտուին
խօսքերս: — Ո՛հ, ես կը թունաւորեմ քո
ջուրը, որ ոչ միայն մարդիկ, այլ և օձերը
մինչև անգամ փախչեն քո ասիերից: (Բա-
ւական ժամանակ կանգնած է խորը մտած-
մունքի մէջ ընկղմած, յետոյ ձեռով շփում
է ճակատը):

Օրերը անց են կենում մինը միւսի ետեւից,
բայց ես չեմ հասնում իմ նպատակին: —
Կարելի է ձկները արդէն լափել են նորա
գիակը, ես ինչք՞ մինչև հիմայ կենդանի եմ:
Մարմինը կորաւ, բայց հոգին երկնքումն է,
ես ի՞նչի չեմ շաապում նորա մօտ: Հիմայ
էլ ինչ հարկաւոր է ինձ կեանքը: (Հանում
է դաշնակը և ուղղում է նորա ծայրը իւր
կուրծքի վրայ): Համասփիւռ, մի՛ բարկանար,
որ այսքան ուշացայ, ահա՛ գալիս եմ, իմ սի-
րական, գալիս եմ: (Ուղում է սպանել իրան,

Բայց յանկարծ ցած է թողնում կուռը) :
 Չէ, ժամանակը չէ : Նորա սպանողը դեռ չէ
 պատժած, նորա մահու վրէժը դեռ չեմ
 առել : (Դնում է դաշնակը իւր տեղը :) Այս
 ի՞նչ է : — Ի՞նչի այսպէս ծանրանում է գը-
 լուխս — ծնկներս ծալվում են — չորս կողմս
 մթնում է : (Նստում է և թեք է ընկնում
 Գ քարի վրայ, փաքրից յետայ քունը տա-
 նում է) :

Նրկրորդ երևոյթ :

ՍՄԲԱՏ Լ ԵՐԿՈՒ ԳԻՒՂԱՅԻ (գալիս են
 աջ կողմից, մանգաղները ձեռին) :

1 Գ. Ի Լ Պ. Այսօր, եղբայր, ուշ ենք
 դնում դաշտը, տէս, արեգակը քնչ տեղ է
 հասել : Նաւ է, թէ մինչև մուկը կարողա-
 նանք հաւաքել բոլոր հացը :

2 Գ. Ի հարկէ, կը հաւաքենք, էլ շատ
 չէ մնացել :

1 Գ. Լսել էս, Պէտրոս, ասում են Ազու-
լիսի մօտ մորեխ է երևացել: Փառք Աստու-
ծոյ, որ այս տարի շուտ հասաւ արտը:

2 Գ. Հիմայ նա էլ մնաս չի տայ, ու-
րովհետեւ նոր է թեւաւորվում, և ամէն տեղ
արդէն սկսել են ցորենը կտրել:

(Անց են կենում մի քանի քայլ և տես-
նում են Սմբատին):

1 Գ. Տես, այս ո՞վ է պարկած, Սմբատը
չէ:

2 Գ. Հա՛, նա է, խեղճ ողորմելին քնած է

1 Գ. Քանի զարմանալի բաներ են պատ-
մում սորա մասին: Մի քանիսը ասում են
թէ զազախները սպանել են, միւսերը, թէ
խելագարուել է և գիշեր ցերեկ ման է դա-
լիս գետի ափերին, անդադար կանչելով իւր
սիրականի անունը, մի քանիսն էլ ասում
թէ ինքն էլ խեղդուել է:

2 Գ. Զարմանալի չէ, որ խելագարուած
լինի ողորմելին: Աստուած ամէն քրիս-

տոննայի գլխից հեռու պահէ այն տարա-
բաղդու թիւնը, որ սորան պատահեց :

1 Գ. Ասում են, կիրակի օրը Աստապա-
տի մօտ որ երկու աղջիկ խեղդուեցան, մինը
սորա սիրականն է եղել :

2 Գ. Ես էլ այդպէս եմ լսել :

1 Գ. Խեղճ տղայ: Արդեօք ի՞նչ էր պատ-
ճառը, որ աղջիկը խեղդուեցաւ .

2 Գ. Ով գիտէ: Մի պատճառ կը լինէր
էլի :

1 Գ. Գիտեա ի՞նչ է: Ես ուզում եմ յետ
դառնալ զիւզը և իմաց անել սորա մօրը,
որ որդին գտնուել է: Խեղճ պառաւր զիշեր
ցերեկ սուգ է անում որդու համար, որով-
հետև կարծում է, թէ նա էլ կենդանի չէ:

2 Գ. Շատ լաւ կանես, Յովհաննէս,
զնա՛ մխիթարի՛ր խեղճ պառաւին, ասա՛, որ
Յմբատը այստեղ է ու առողջ է, զնա՛, ևս
քիզ այստեղ կը սպասեմ և մինչև քո դա-
րը կը զարթեցնեմ սորան :

(1 զիւզացին գնում է):

Երրորդ երևոյթ :

ՍՄԲԱՏ Լ 2 ԳԻԻՂԱՅԻՆ :

2 Գ. Ի Լ Ղ . (Մօտ է գնում Սմբատին) :
Ինչպէս խորը քնած է : (Սմբատը շարժվում
է և ձեռները տարածում է) : Ի՞նչ երազ է
տեսնում հիմայ : Ով գիտէ տեսնում է , որ
գետը տանում է նորա սիրականին և նա
ձեռները տարածում է , որ բռնէ ու դուրս
հանէ նորան ջրից : — Խեղճ Սմբատ , ինչպէս
հալուել է , դէմքը կարծես թէ մեռելի
դէմք լինի , էլ ձանաչել չէ կարելի : Ափսոս
ինչ տղա էր : Բոլոր Հայաստանը ման գայիր
երկուսը չէիր գանի սորա հատը , բայց այժմ
ինչի նման է , կարծես թէ գերեզմանից հա-
նած մեռել լինի : (Սմբատը ախ է քաշում
քնած ակողը) : Բայց զարթեցնեմ : (Կամաց
շարժում է նորան) : Սմբատ , եղբայր , զար-
թիր , այս ի՞նչ տեղ ես պարկել :

Ս մ բ . (Չարթում է և վեր է թռչում) :
Պետրոս դու ես , ի՞նչ ես ուզում :

2 Գ. Օրհնած, ի՞նչ ես պարկել այս-
տեղ, տուն չո՞ւնիս :

Ս մբ. Ե՛հ, եղբայր, ես հիմայ էլ տուն
չունիմ, իմ տունը քանդուեցաւ : Այսու-
հետեւ բոլորը մին է ինձ համար : — Ո՛հ,
Պետրո՛ս, դիտե՛ս, թէ ի՞նչ եկաւ իմ գլխին :

2 Գ. Գիտեմ, եղբայր, և վկայ է Աստ-
ուած, որ շատ ցաւում եմ : Բայց մեր ձե-
ռին ի՞նչ կայ : Աստուծոյ կամքն էր : Սիրտդ
պինդ պահիր, եղբայր, տղամարդ էս պէտք
է համբերես :

Ս մբ. (գլուխը շարժելով) : Ո՛հ հեշտ
բան է ասել համբերիր : Բայց ես տղա-
մարդ եմ միայն և ոչ թէ քար, ի՞նչպէս
համբերեմ : — Ա՛խ եղբայր, դու չես կարող
հասկանալ իմ ցաւը, եթէ դեռ չես սի-
րել : Նա միայն կարող է հասկանալ իմ
ողորմելի վիճակը և խղճալ ինձ, ով որ սի-
րել ու սիրուել է, ով որ ճաշակել է այն
այն երկնային երջանկութիւնը, որ տալիս է

մեզ սէրը : — Ա'խ ես ճաշակել եմ այդ եր-
ջանկու թիւնը , ես վայելել եմ սէրը մի այն-
պիսի ա ջկայ , որի նմանը չէր սեսել աշ-
խարհը , բայց անգու թ մահը խլեց նորան
ինձանից : — Ի՞նչպէս համբերեմ :

2 Գ. Բայց ես էլի կրկնում եմ , որ պիտի
համբերես , որովհետե քս յաւաստու-
թիւնը կրկին չի կենդանացնի նորան , այլ
կը կարճացնէ կեանքիդ օրերը : — Տես , թէ
ինչպէս հալուել աւ մաշուել ես այս մի քա-
նի օրուան մէջ :

Ս մ բ. Այսուհետե ինձ էլ հարկաւոր
չէ կեանքը : Իա ինձ համար դառել է հի-
մայ ծանր բեռը , որ ճնշում է ինձ : — Ա'խ
հա՛ , Պետրոս ջանե , չէս իմացել , չէ՞ն գտնչ
Համասփիւռին :

2 Գ. Նորան դեռ չեն գտել , բայց նորա
ընկերին երէկ գտանք ու թաղեցինք :

Ս մ բ. Ա'խ , Աստուած , ես ե՞րբ պիտի
գտնեմ :

2 Գ. Սմբատ, դու ոչինչ չես հար-
ցնում քո մօր մասին: Խեղճ պառաւի աչ-
քերը էլ չեն ցամաքում գիշեր ցերեկ, որով-
հետե նա քեզ մեռած է համարում:

Սմբ. Ո՛հ, թող մեռած համարէ ինձ,
մեռած համարեցէք ինձ ամէնքդ. — Ասա
մօրս, որ վաղօրօք սուղ անէ ինձ վրայ և
մոռանայ ինձ:

2 Գ. Եղբայր, այդպէս շուտ մի՛ կտրիք
յոյսդ կեանքից: Մարդս քանի կայ ու կեն-
դանի է, շատ չար ու բարի կը տեսնէ, շատ
ուրախ ու տխուր օրեր կը պատահի, բայց
ամենին էլ պիտի համբերէ, որովհետեւ,
ինչպէս ասած է, առանց Աստուծոյ կամքի
մի հատ մազ էլ կարող չէ վեր ընկնել մեր
գլխից:

Սմբ. Լաւ ես ասում, Պետրոս, բայց
իմ ցաւը անտանելի է, նորանից առողջա-
նալու ճար չկայ, նորա վերջը մահ է:

2 Գ. Չէ, Աստուած ողորմած է: Ժա-

մանակը կը բժշկէ քո սրտի խոցերը, դու
կը մտնանաս նորան և միւս անգամ կը բաղ-
դաւորուիս :

Ս մ բ. (գլուխը շարժելով) : Միւս ան-
գամ կը բաղդաւորուիմ : — Առանց նորան
չը կայ բաղդաւորութիւն : Ես այդ լաւ գի-
տեմ : (Ուղում է գնալ) :

Չ Գ. Կաց, ո՛ւր ես գնում : Ահա մայրդ
գալիս է : Խղձա՛ նորան :

(Գալիս են Մարթան և 1 գիւղացին) :

Զորրորդ երևոյթ :

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ, ՄԱՐԹԱ և 1 ԳԻՒՂԱՑԻՆ :

Մ ա Ր Թ ա. (վազում է Սմբատի վրայ,
փաթաթվում է վզին և ջերմութեամբ համ-
բուրում է) : Սմբատ, իմ թանգագին որդի,
իմ աչքի լոյս : Կենդանի ես, էլի գտայ քեզ,
էլի արժանացայ սեղմել քեզ կուրծքիս վրայ :
— Որդի, հոգի, իմ ուրախութիւն : Փառք
քեզ Աստուած :

Ս մբ. (խլուելով նորա գրկից): Մի՛ ուրախանար, ողորմելի կին, դու էլ որդի չունիս: Համասիիւռի մահով մեռաւ և քո Սմբատը:

Մ. Չէ, չէ, իմ որդին կենդան է: (Նորից գրկում է և պինդ սխմում է իւր կուրծքին): Սմբատ, իմ մի հատ մսիթարութիւն, մեռնեմ քո արեին, իմ քաղցր որդի: — Ո՛հ. հիմայ էլ ոչ ոք չի խլի քեզ ինձանից:

Ս մբ. (խլվում է նորա գրկից): Մայր, լաւ նայիր երեսիս, տես, թէ մահը չէ դրել նորա իւր նշանը:

Մ. Այն օրը մահ լինի քո մօր գլխին: Չ՛, Աստուած ողորմած է: Նա չի խլի մի խեղճ պառաւից նորա մի հատ ուրախութիւնը:

Ս մբ. (դառը ժպտով): Ո՛հ դորանից հեշտ բան չը կայ նորա համար: Եթէ նա խլեց ինձանից իմ ուրախութիւնը, իմ մսիթարութիւնը, իմ բաղդաւորութիւնը, բո-

լորը . բոլորը , ինչ որ առել էր ինձ , ապա
ի՞նչի կը դժուարանայ խել քեզանից քո որ-
դուն , որ այսուհետե էլ ոչինչ օգուտ չէ
քեզ :

Մ . Վայ ինձ , Սմբատ , այդ ի՞նչ խօս-
քեր են դուրս գալիս քո բերանից : Դու
զանգատ ես անում Սամոնից :

Սմբ . Չէ , մայր , ես չեմ զանգատում
նորանից , և ո՞ւմը ասեմ իմ զանգատը , երբ
որ նա ինքն է ամենի դատաւորը : Բայց ոչ
մի մահկանացու կարող չէ տանել այն ցա-
ւին , որ նա դրեց սրտիս մէջ , նա քանդեց
իմ բաղդաւորութիւնը :

Մ . Սմբատ , սիրտս կտոր կտոր է լինում ,
քեզ այդպէս տեսնելով : Նաև գիտե՞ս , որ
կեանքս չեմ խնայի մատաղ բերել քեզ հա-
մար : — Բայց հոգիս սաստիկ խռովում ու
սրտմում է , լսելով քեզանից այդ խօսքերը :
Դու քրիստոնեայ ես , որդի , պիտի խոնար-

հիս Աստուծոյ, որովհետեւ չես կարող փոխել նորա վճիռը:

Ս մ բ. Ա'իս, ես այդ գիտեմ, եւ այդ պատճառով էլ քրքրում է հոգիս յուսահատութիւնը: Բայց ես ի՞նչ արեցի, որ այսպէս բարկացաւ ինձ վրայ:

Մ. Ո՞վ գիտէ, կարելի է այդ իմ մեղքերի պատիժն էր: Բայց մի' յուսահատելի, այսօր բարկացաւ քեզ վրայ քո երկնաւոր հայրը, բայց էգուց կարող է սիրել ու բաղդաւորել քեզ:

Ս մ բ. Ա'իս, չէ, մայր, ինձ համար էլ բաղդաւորութիւն չը կայ այս կեանքում: (Կարձ' լռութիւն): Ի՞նչ եմ կանգնել ու խօսում: Մնաս բարով, մայր: (Գրկում է նորան): Կարելի է էլ չը տեսնուիք:

Մ (վախեցած բռնում է նորան): Ո՞ւր, որդի, ո՞ւր ես գնում: Հերիք չէր, ինչ որ տանջուեցայ: Կայ ինձ մօտ, մի' գնա, որդի: Արի գնանք տուն:

Ս Վ Բ. Թո՛ղ, թո՛ղ, ես պիտի գնամ գրտնեմ իմ Համասփիւռին :

Մ. Սմբատ, Սմբատ, խղճա՛ ինձ, մի՛ գնա՛, որդի՛ : Գու՛ կարօտ ես՝ մխիթարութեան և հանգստութեան — բայց ո՞վ կարող է մխիթարել քեզ մօրհօր լաւ : Ի՞նչտեղ կարող ես աւելի լաւ հանգստանալ, քան թէ քո մօր սիրող ու հաւատարիմ կուրծքի վրայ : — Կա՛յց, որդի :

1 Գ իւղ . Սմբատ, մի՞ թէ չեն շարժում քեզ մօրդ խօսքերը, մի՞ թէ քար է քո սիրտը : (Սմբատը ձեռները կուրծքին ծալած կանգնած է մտածմունքի մէջ) :

2 Գ. Գու՛ գնում ես, բայց եթէ (ցոյց տալով մօր վրայ) սորան մի բան պատահի, յաւիտեան պարտական կը մնաս Աստուծոյ ահեղ դառնատանի առաջ :

(Գալիս են մի քանի մարդիկ ու կանայք) :

3 Գ. Աչքդ լոյս, քոյր Մարթա, փառք Աստուծոյ տղադ դանուեցաւ :

4 Գ. (Սմբատին) : Աստուծով մխիթարուիս, եղբայր, գլուխդ ապրի : Է՛հ ինչ անենք, նորա ճակատին էլ այն էր գրած :

5 Գ. Շատ մի՛ տրտմիք, եղբայր : Դու լաւ կաց, թէ չէ աղջիկ շատ կը ճարուի : Նա քո բաղդը չէր :

(Այդ միջոցին կանայքը քչիւնալով մօտ են գնում ջրին) :

Սմբ. Ի՞նչեր էք ասում, քարասիրտ մարդիկ : Ձեր խօսքերը մխիթարելու տեղ աւելի բորբոքում են իմ ցաւը : — Ձէ՛, ոչ ինչ մի՛ ասէք : Ես չեմ հաւատում, որ դուք խղճում էք ինձ : — Ի՞նչպէս կարող են խրղճալ մարդիկ, երբ որ ինքը երկինքը անողորմ է : — Ձէ՛, չէ, ոչ ինչ մի՛ ասէք ինձ. թողէ՛ք գնամ իմ ճանապարհով : Մխիթարեցէ՛ք մօրս, եթէ կարող էք : — Մնաս բարով, մայր : (Ուզում է գնալ, բայց մի քանի քայլ անելուց յետոյ, կանգնում է լսելով մօր ձայնը) :

Մ ա թ թ. (Ողբալի ձայնով) : Ո՛հ, ան-
գուժ զաւակ : Եթէ քեզ համար ոչինչ են
իմ արտասուքները, եթէ չես խղճում ինձ,
առաջ սպանիր, յետոյ գնա՛, ուր որ ուզում ես :

1 Կ ի ն ը. (Կռանում է ջրի վրայ, բայց
խկոյն վախեցած յետ է թռչում մի քանի
քայլ) : Վայ, Աստուած, այս ի՞նչ է :

(Ամէնքը նայում են այն կողմը : Սմբատը
կանգնում է) :

Մ ի ք ա ն ի ս ը : Ի՞նչ է, ի՞նչ կայ այդտեղ :

2 Կ, (բարձրացնում է ջրից մի կուռը,
բայց խկոյն զարհուրած թողնում է ձեռից
և փախչում է մի կողմը) : Վայ :

Ս մ բ. (Առաջ վազելով) : Տէր Աստուած,
այս իմ համասփիւռն է : (Շուտ կռանում է
և հանում է ջրից համասփիւռի դիակը,
Սաստիկ յուսահատ ձայնով) : Համասփիւռ :
(Ամէնքը զարհուրած դարձնում են երեսները) :

Ս մ բ. (դնում է դիակը գետնի վրայ, չո-
քում է մօտը և ծածկում է երեսը նորա

կուրծքի մէջ) : Համասփիւռ, վայ իմ գլխին
ու արեին. ես քեզ այսպէս պիտի տեսնէի՞ :
Ա'խ իմ հրեշտակ, այս ինչ բան արեցիր ինձ,
ի՞նչի այսպէս մենակ ու ողորմելի թողեցիր
քո Սմբատին : — Ա'խ իմ հոգի, իմ նազե-
լի, մի ձայն հանիր, մի հատ ձայն, յետոյ
թող երկինքը փուլ գայ ինձ վրայ, թող բո-
լոր աշխարհը խախտուի իւր հիմքերից,
այսուհետեւ բոլորը մին է ինձ համար : (Զար-
հուշած վեր է թռչում) : Ա'հ, ինչպէս սառն
ես Համասփիւռ :

Մ. (մօտ գնալով) : Սմբատ, սիրելի որդի :

Սմբ. (ծիծաղում է ինչպէս խելագար) :
Տէս. տէս, ինչպէս երկինքը ծիծաղում է վե-
րեից իւր արած գործի վրայ : (Աստաղած
դէս ու դէն վազելով) : Ա'հ, ես էլ կարող
եմ մի տասը մարդ այսպէս սառեցնել. ես
էլ վրէժխնդիր կը լինիմ :

Մի գիւղ. Ողորմելու խելքը ցնորվում
է յուսահատութենից : Հեռացրէ՛ք մեռելը,
թէ չէ բոլորովին կը խելագարուի :

Ս մ բ. (Ձեռք բարձրացնելով): Նրկի՞նք ,
ո՞ւր է քո արդարութիւնը, ո՞ւր է քո կրակը:
Ի՞նչի շեւ թափում սորա սպանողների գլխին:
(Նրկու մարդ մօտ են գնում, որ վեր առ-
նեն Համասփիւռի դիակը):

Ս մ բ. (Կատաղած վազում է նոցա վրայ):
Հեռացէ՛ք: Ի՞նչ էք ուզում: Ձը համար-
ձակուէք ձեռք տալ իմ սիրականին: — Ի՞նչ:
Կարծում էք, թէ մեռած է: Ձէ, չէ, չէ,
սա քնած է, այ տեսէք զարթեցնեմ: (Ձո-
քում է դիակի մօտ): Համասփիւռ, Համա-
սփիւռ, զարթիր, աչքերդ բաց արա՛: —
Շո՛ւտ, շո՛ւտ, հողի ջան, շո՛ւտ, քահանան
սպասում է մեզ պսակելու — Ո՛հ. (Վեր է
ընկնում դիակի վրայ):

Մ ա թ թ ա: Սմբատ, որդի, վայ ինձ:
(Ծածկում է երեսը ձեռներով):

Մ ի գ ի ւ զ. Խեղճ տղայ:

Ս մ բ. (վեր է կենում, դէս ու դէն տա-
տանելով և երկու ձեռով բռնում է իւր

գլուխը, կարծես թէ ուզում է հաւաքել
խւր մտքերը): Այս ի՞նչ տեղ եմ:— Տէր Աստ-
ուած, երազումն եմ, թէ արթուն: — Ա՛հ,
չէ, այս երազ չէ: Ահա՛ սա անշունչ ընկած
է իմ առաջ:

Մ ար թ ա. Որդի՛, հերիք է, թէ Աստ-
ուած կը սիրես: Ինձ էլ մի փոքր խղճա՛:

Մ ի դ իւ ղ. Հերիք է, եղբայր, թող
թաղենք:

Ս մ բ. Հա՛, հա՛, թաղեցէ՛ք, բայց ինձ էլ
հետը. (Հանում է դաշնակը):

Մ ար թ. (Սաստիկ վախեցած առաջ է
վազում): Վայ. որդի, ինչ ես անում:

Մ ի ք ա ն ի ս ը. Խլեցէ՛ք խանջալը:

Ս մ բ. (Սաստիկ ձայնով): Կացէ՛ք ձեր
տեղը. մօտ չը դաք, թէ չէ կը զղջաք: (Դառ-
նալով դէպի դիակը). Համասփիւռ, Աստուած
ու մարդիկ քանդեցին մեր բաղդաւորու-
թիւնը, դու լաւ համարեցիր մեռնել, քան

Թէ ասորել ուրիշի համար: — Ես կը հետեւեմ
քո օրինակին:

Մ ա ը Թ. (բռնում է նորա կուռը): Սըմ-
բան, առանց քեզ ի՞նչ կը լինի իմ ճարը,
ո՞վ կը լինի իմ տէրը: Որդի, ասորիք քո մօր
համար:

Ս մ բ' (խլվում է նորա ձեռից): Թո՛ղ,
համասփիւռը կանչում է ինձ:

Մ ա ը Թ. (Յուսահատ ձայնով): Հա-
րեաններ, օգնեցէք, մի' Թողնէք, որ սպանէ
իւր գլուխը:

Ս մ բ. (գիւղացիներին): Ջուղայեցի՛ք, տե-
սէք, այս աղջիկը մեռաւ ինձ համար: Սա
սպանեց իւր գլուխը, որ չը տայ իւր սիրտը
ուրիշին: Ձեզ եմ հարցնում, մի' Թէ ես
էլ պարտական չեմ մի և նոյնը անել: —
Հա՛, ես պիտի վճարեմ իմ պարտքը: — Հա-
մասփիւռ, գալիս եմ: (Նա շուտ ցցում է
դաշնակը իւր սրտի մէջ և վեր է ընկնում
համասփիւռի դիակի մօտ):

Մ ա ը թ . վ ա յ . արևս խաւարեց . (վեր է
ընկնում թուլացած) :

(Ամէնքը կանգնած են զարհուրած) :


Ս Տ Բ . (Մի փոքր բարձրանալով հատ կը
ռան վրայ) . Թէ Աստուած կը սիրէք մեզ
միասին թաղեցէք : — Մնաք բարով : — Հա-
մասիւն : (Յետ է ընկնում և մեռնում է)

Վ Ե Ր Զ :

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՍԽԱԼՆԵՐ:

սխալ	ուղիղ	եր. տող
Քն կըտեսնենք —	Քն կըտեսնենք —	13—5
որ յանկարծ կտրեց	որ յանկարծ մի ձի-	
ճանապարհս — —	աւոր կտրեց ճանա-	
	պարհս — — —	19—15
պատժի դէմ — —	պատշաճի դէմ —	70—14
որ այս տալիս ես	որ այս պատիժը	
իսձ — — —	տալիս ես իսձ —	85—15
կը տամ — —	որ տամ — —	91—12
չի մտանայ —	չի լավանայ —	92—6
պատահեցի և —	պատահեցի նշան	
շատ — — —	տուէքին և շատ	108—11
նորա իւր նշանը	նորա վրայ իւր	
	նշանը — — —	146—11

Բացի սորանից տեղ անդ տպած է չեմ ու-
րանալ, չեմ տալ, մի ասեր, որ պետքէ կարդալ
չեմ ուրանա, չեմ տայ, մի ասիր:



« Ազգային գրադարան



NL0115099

